Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԱՐԱՐԱՏԸ

891.542-3
Բ-15

19 NOV 2011

# ԱՐԻ ՄԱՅՐ

# ՄԱՐԻԱՄԸ

## ԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑԱԾ ՏԵՍԻԼ

---

1874-ից մինչև 1877-ի
ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մ. Ց. դպրոցի 25-ամեայ գոյութեան յիշատակին.

Նոյն Դպրոցի Կրօնուսոյց
ԱՐՍԷՆ ԱՒ. ՓԱՀ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒՑ.

ԹԻՖԼԻԶ
ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՈՍԻՆԵԱՆՑԻ
1905

01 JAN 2009
891.99
56

# ԲԱՐԻ ՄԱՅՐ

# ՄԱՐԻԱՄԸ

## ԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑԱԾ ՏԵՍԻԼ

1874-ից մինչև 1877-ի
ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մ. Ց. դպրոցի 25-ամեայ գոյութեան յիշատակին

Նոյն Դպրոցի Կրօնուսոյց

ԱՐՍԷՆ ԱԻ. ՔԱՀ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1905

22875

26 ԵՐ 2013

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го Іюня 1904 г.

# ՆՈՒԷՐ

ՀԱՆԴՈՒՅՑԱԼ ՄԱՐԻԱՄ և ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՆԱՆԵԱՆ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ

ԱՆՄԵՌ ՑԻՇԱՏԱԿԻՆ.

*Մարիամեան-Յովնանեան Դպրոցի Կրօնուսոյց*

ԱՐՍԷՆ ԱԻ. ՔԱՀ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒՑ.

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԽՄԲԱԿԻ

Գարնանային պայծառ առաւօտ էր, արշալոյսը դեռ նոր էր ծագում կեանք աւետելու գիշերային մեղմիկ զեփիւռի անուշ օրօրքներով տարուբերուող և հանգիստ քնոյ մէջ մոռփող բընութեանը. դալար արօտների վերայ տակաւին փայլում ու շողշողում էին ցօղի մարգարտանման կաթիլները. և ահա մի բազմամարդ քաղաքից դուրս էր գալիս մի աղջիկ խմբակ, տխուր կերպարանքով, կէս յուսահատ սրտով, արագ քայլերով, կարծես այդ ժամից նա վճռել էր մաքառել կեանքի հետ, տալ օրհասական պատերազմը. և կամ ընկճուել տգիտութեան կուռ շղթաների ծանրութեան տակ, կամ տանել յաղթանակը լուսաւոր ուսման դրօշակի տակ. ահա թէ ինչ է այդ խմբակի ճանապարհորդութեան նպատակը։

Նա արագ քայլափոխով կտրում է ճանապարհի երկարութիւնը և առնում է իւր դադարը մի ձորամիջի կարկաչուն աղբիւրակի մօտ։

Այդ խմբակը կազմող աղջիկներն էին՝ Վարդիթեր, Նազիկ, Նուարդ, Սրուսեակ, Նարգէս, Սիրանուշ, Վարդանուշ, Նազելի, Սրբուհի և Սաթենիկ։

Սիրելի՛ քոյրեր, խօսում է Վարդիթերը, մենք թողեցինք մեր տուն ու տեղը, հայրն ու մայրը, եղբայրներն ու քոյրերը, ի հարկէ առ ժամանակ միայն, որ որոնենք և գտնենք թէ մեզ և թէ մեր ուսման կարօտ քոյրերի համար մ. բարի մայր, որը պիտի լինի մեր փրկիչը, որովհետև նա պիտի փրկէ մեզ տգիտութեան խաւարից։ Ուստի քանի որ դեռ շատ չենք հեռացել քաղաքից, մտածենք և հաստատ որոշենք, թէ կարող ենք արդեօք տոկուն համբերութեամբ տանել պանդխտութեան և այն կարօտին՝ որը արդէն իսկ քաղում է մեր հոգին. որովհետև այսպիսի մի նպատակի հասնելը առանց նեղութեան և չարչարանքի չի լինիլ։

Վարդիթեր քոյրիկ, ասում է Սրբուհին, ծնողական տունը մեզ համար միշտ սիրելի է. նա պաշտելի է, նա նուիրական է, բայց ինչ օգուտ կտանք մենք նոյն տանը, քանի որ մենք այս վիճակի մէջ կլինենք, ոչինչ. նա դարձեալ կմնայ խուղ, խրճիթ. դարձեալ նոյն խեղճ դրութեան մէջ, ինչպէս և այժմ. ուրեմն հարկաւոր է մեզ յառաջ գնալ ուսում և գիտութիւն ձեռք բերելու, որպէս զի մի օր մեր ձեռք բերած ուսման լուսով մեր ծնողական խրճիթները լուսաւորենք և լինենք նոյն խրճիթների հիմնական սիւները և մեր ծնողների ծերութեան գաւազանը.



իսկ ինչպէս կհասնենք մենք մեր այս սուրբ նպատակին, եթէ ոչ չարչարանքով, նեղութիւնով, պանդխտութիւնով և անյուսահատ աշխատանքով։

*Արուսեակ.* Զատ ճշմարիտ է. ով է ուտում իւր հացը, կամ խմում իւր ջուրը առանց ճակատի դառն քրտնքի. թռչունը իւր թռչուն տեղով որքան է չարչարւում, ինչ է նորա ամբողջ կեանքը, եթէ ոչ չարչարանք միայն։ Մի օր մայրս կար էր անում, ինձ համար Զատկուայ շորեր էր կարում, ես էլ մօտը նստած էի և նայում էի մեր տան պատշգամբի առաստաղին, ուր սիրուն ծիծեռնակը, զարնան այդ առաջին աւետարերը, ո՜հ ինչքան սիրում եմ ես ծիծեռնակներին, շինում էր իւր բունը. այնքան սիրեցի և հետաքրքիր էի, որ ուզեցի ամեն օր նայել ու տեսնել թէ վերջը ինչ պիտի լինի. երբ շատ. չարչարուելուց յետոյ շինեց իւր բունը, յետոյ էլ ներևաց. վերջը յանկարծ բնից ծվծվոցի ձայներ լսեցի և ահա ծիծեռնակը թռաւ բնից և շուտով դարձաւ, կտուցով որդեր բերեց. հէնց որ մօտեցաւ բնին, փոքրիկ ձագուկները դեղին կտուցները բաց արին ու ծվծվացին, նա կերակրեց նոցանից մէկին, կարծեմ հինգ հատ էին. յետոյ կերակրում էր և միւսներին փոխ է փոխ, զարմացայ ճշմարիտ, թէ ինչպէս այդ սիրուն թռչու-

նը ամենևին չէր հանգստանում, միշտ թռչում էր այս ու այն կողմը և միշտ կտուցով որդեր ու ճիճու էր բերում. այս դեռ բաւական չէ, երբ ձագերը մեծացան նա սովորցնում էր նրանց թռչել. թէ ինչքան չարչարւում էր խեղճը, չեմ կարող պատմել, մանաւանդ որ մի վատ կատու էլ ունէինք, որը թաղ էր կենում և ուզում էր բռնել ձագերին, մի անգամ էլ քիչ մնաց որ բռնի, բայց ես ազատեցի, որքան ուրախացայ որ լաւութիւն արեցի ես այն խեղճ ձագուկին. արդեօք մարդիկն էլ սրբախանում են, որ խեղճին լաւութիւն են անում։ Վերջապէս, որովհետև շատ էի զարմացել, դարձայ դէպի մայրս և ասացի «մայրիկ ջան, մեղք չէ՞ այս ծիծեռնակը, որ այսքան չարչարւում է.» «սիրելի Արուսեակս, ասաց ինձ մայրս, ով կարող է ապրել առանց չարչարանքի. հայրդ չէ՞ չարչարւում որ մեզ կերակրում է, տեսնում ես ինչպէս ամեն օր, հէնց բարի լոյսը բացւում է թէ չէ, դուրս է գնում աշխատելու, յետոյ գալիս է տուն և բերում է իւր ճակատի քրտինքի աշխատանքը, ինքն էլ է ուտում, մենք էլ ենք ուտում և յետոյ էլի գնում է աշխատանքի. տեսնում ես, ես էլ սաղ օրը նստած ասեղը ձեռքիցս վայր չեմ ձգում, կարկատում եմ ձեր հները, կարում եմ ձեզ համար նոր շորեր, լուանում եմ կեղտոտները, պատ-



բաստում եմ մեր կերակուրը, ով մեզանից հանգիստ օր է տեսնում. միշտ աշխատանքի ու չարչարանքի մէջ ենք անցկացնում մեր կեանքը, եթէ այդպէս չանենք ինչպէս կարող ենք ապրել. մարդս չարչարանքի համար է ծնուած, սիրելի Արուսեակս. եթէ դու այժմ չես աշխատում, այդ նրա համար է, որ դու դեռ փոքր ես, բարով Աստուծով երբ կմեծանաս, դու էլ կաշխատես. այն ժամանակ մենք ծերացած կլինենք, դու քո աշխատանքովդ պէտք է պահես թէ մեզ և թէ քեզ»։

Այժմ որ խելքս աւելի է հասնում, մտածում եմ, տեսնում եմ որ մայրս ճշմարիտ էր ասում. ով կայ, որ առանց աշխատանքի ապրի. հարուստն էլ է աշխատում, աղքատն էլ. ամենքն էլ չարչարւում են, քրտինք են թափում. մենք էլ նոցա նման պէտք է չարչարուենք ու աշխատենք որպէս զի կարողանանք օգուտ տալ թէ մեզ և թէ մեր հայ քոյրերին։

*Նազիկ.* Որ նորա էլ մեզ նման ստիպուած չլինեն թողնելու տուն ու տեղ և բարի մայր որոնելու. մենք մեր այս ծանր աշխատանքով բաւական թեթևացրած կլինենք նոցա չարչարանքը. 'ի հարկէ մարդ առանց չարչարանքի չէ կարող ապրել, բայց կայ ծանր և թեթև չարչարանք ու աշխատանք։ Առաջ որ քանի օրում մի բան էին կարում, այժմ կարի գործիքով (մաշինով) շատ

շուտ և հեշտութեամբ են կարում. ուրեմն չարչարանքը թեթևացաւ. այդպէս էլ մենք գտնելով բարի մայրը քանի հարիւրաւոր Հայ աղջիկների ծանր չարչարանքը թեթևացրած կլինենք. մենք կլինենք որոնողը, գտնողը, իսկ նորա արդէն գտնուած պատրաստ բարի մօր խնամքը կվայելեն, նորա հովանաւորութեան տակ կտանան այն փրկարար ուսումը, որի համար մենք յանձն ենք առել այնքան չարչարանք և այսպիսի մի դժուար ճանապարհորդութիւն։

*Սիրանոյշ.* Բայց քանի՞ օր և կամ մինչև ո՞ւր պիտի ճանապարհորդենք։

*Նուարդ.* Սարերն ու ձորերը, դաշտերն ու անտառներն առաջներիս. կերթանք ու կերթանք, մինչև կգտնենք մեր որոնած բարի մայրը։

*Նարգիս.* Խմենք վերջին անգամ այս սառն աղբիւրի ջուրը և ընկնենք ճանապարհ։

*Վարդանուշ.* Ա՜խ, Աստուած. շուտով պատահի մեզ բարի մայրը. ծնողաց կարօտը արդէն իսկ քաղում է հոգիս։

*Նազելի.* Ի՜նչ դժուար է Հայ աղջկայ համար պանդխտութիւնը։

*Սաթենիկ.* Մանաւանդ այսպիսի անորոշ ճանապարհորդութիւնը։

*Վարդիթեր.* Ինչ անենք. ինչպէս Արուսեակն էլ ասաց մենք չարչարանքի ու աշխատանքի համար ենք ծնուած. եթէ մենք տանը նստէինք առանց այն փրկարար ուսման, որի գիրկն են վազում ամենքը, այն ժամանակ մենք միայն ծանրութիւն պիտի լինէինք մեր ծնողներին, մինչև երբ մեր ծնողները մեզ իբրև անդամալուծներ պիտի պահեն. չէ՞ որ նոցա կրած չարչարանքը մի օր պիտի հատուցուի, և ումով, եթէ ոչ մեզանով. բայց ինչպէս, քանի որ ոչ աշխատանքի դուռը գիտենք և ոչ ճանապարհը, որը միայն ուսումով կարող ենք սովորել և ճանաչել. այդ ուսման համար ահա, մենք պէտք է չարչարուենք. և լաւ է այժմ չարչարուենք և վերջը հանգիստ լինենք, քան թէ այժմ հանգիստ լինենք և վերջը դառն աղքատութեան, խեղճութեան և տգիտութեան ձեռքից տանջուենք ու հալածուենք։ Նայենք փոքր ինչ ժրաջան մեղուի վերայ, որը ծաղիկների քաղցրահիւթից, իւր անդադար աշխատանքով, այնպիսի մեղր է շինում, որը յարգի է սկսեալ թագաւորի պալատից մինչև վերջին աղքատի խրճիթը։ Նայենք աշխատասէր մրջիւնին, որը ամբարում է իւր շտեմարանում ձմեռուայ պաշարը, անդադար քաշելով իրանից քանի անգամ մեծ ծղօտներ, որ նորանով ապրի։ Զվախենք ու չյուսահատուենք ուրեմն մեր ճանապարհորդութիւնից, գնանք յառաջ. Աստուած մեզ հետ է։



---

## ՀՈՎԻՈՒՀԻՔ

Կէս օր ճանապարհորդելուց յետոյ խմբակը հասաւ մի ծառապարդ ձորափի, ուր երկու հովուհիք մի ծառի ստւերում նստած իրենց համեստ նախաճաշն էին անում, իսկ ձորի մէջ փըռուած էին ոչխարները իրենց սիրուն գառնուկներով և դալար արօտներն էին արածում։

Ո՞ւր բարի, քոյրիկներ, հարցրին հովուհիքը իրանց մօտացող խմբակին։

Ուր որ Աստուած կառաջնորդէ, ասաց Սրբուհին։

Յոգնած կլինէք և քաղցած, նստէք մեզ մօտ, հանգստացէք և ճաշեցէք մեզ հետ, ասացին հովուհիքը։

Ընորհակալ ենք բարի քոյրեր, ասաց խմբակը միաբերան և նստեց ճաշելու։

*Նազիկ.* Երջանիկ էք դուք, բարի հովուհիներ, որ ըաց օդի մէջ այսպիսի սիրուն ծառի շուաքում, սիրուն ու անմեղ գառնուկների հետ վայելում էք ընութեան քաղցրութիւնը. այն ինչ մենք տնից տեղից հեռացած, որբերի նման, առանց ծնողների գնում ենք և չգիտենք ուր և թէ մինչև երբ։

Ո՛չ, ոչ. մենք երջանիկ չենք, մենք էլ ունենք մեր վիշտը, ասացին հովուհիքը. բայց



թողնենք դեռ մեր վիշտը. ի՞նչ է, սիրելիք, ձեր ճանապարհորդութեան նպատակը։

*Վարդանուշ.* Ա՜խ, մայր ենք որոնում, մայր։

Մի՞թէ դուք մայր չունէք, հարցրեց զարմանալով հովուհիներից մէկը, որի անունն էր Զոդեր։

*Նազելի.* Ունենք մայր. բայց մեր որոնածը ուրիշ տեսակ մայր է։

Ես չեմ հասկանում, զարմացաւ միւս հովուհի Համասփիւռը։

Մի զարմանար սիրելի, ընդհատեց Նուարդը, մենք ամենքս էլ ունենք ծնող մայր, բացի սորանից, ցոյց տալով Նազիկի վերայ, որը ոչ հայր ունէր և ոչ մայր. բայց մեր որոնածն է բարի մայր, ուսման մայր. այսինքն՝ որ նա բարի լինի այնքան, որ մեզ խղճայ և երբ կխղճայ՝ մեր խնդիրքն էլ կ'կատարէ, այն է մեզ ուսում կտայ. այդ ուսումով մենք պէտք կգանք թէ մեզ, թէ մեր ծնողներին և թէ մեր ուսում չունեցող Հայ քոյրերին։

*Շողեր.* Ա՜խ. ահա դուք էք երջանիկ և ոչ թէ մենք. դուք վերջ ու առաջ կգտնէք այդ ուսման բարի մայրը և կհասնէք ձեր նպատակին. բայց մենք ի՞նչ անենք, որ միշտ ոչխարների հետ պիտի անցնենք մեր կեանքը, ի՞նչ պիտի սովորենք մենք ոչխարներից։

*Համասփիւռ.* Այո՛ մենք ոչինչ չենք կարող սովորել ոչխալներից, այն է միայն որ օրական մի քանի կոպէկ աշխատում ենք մեր եղբայրների հետ և մեր տան հացագինը դուրս է գալի. բայց դուք ուսում կառնէք, ամեն բան կհասկանաք, դասեր կտաք, մեծ փող կաշխատէք, յաւ կապրէք և ոչ թէ մեզ նման, ամենքը ձեզ կսիրեն ու կպատուեն. իսկ մենք....

*Սիրանուշ.* Ընկերացէք մեզ հետ և դուք, եթէ այդքան սէր ունէք ուսման։

*Համասփիւռ.* Երանի չէր. բայց մեր մայրերը չեն կամենում որ մենք ուսում առնենք, նորա մեզ չեն թողնում որ մենք ուսումնարանի անունն անգամ տանք, սուր թէ ուսումնարան մըտնենք և ուսում առնենք։

*Արուսեակ.* Այսպիսի խօսք ես առաջին անգամն եմ լսում. մի՞թէ այնպիսի մայր կայ այժմ, որ չ'կամենայ ուսում տալ իւր որդուն, չէ, չէ. սիրելի Համասփիւռ, դու սխալւում ես։

*Համասփիւռ.* Կայ, այո՛, կայ. և եթէ մեր մայրերը չեն կամենում մեզ ուսումնարան տալ, պատճառներ շատ ունեն։

*Նարգէս.* Բայց ի՞նչ է պատճառը որ ձեր մայրերը այդպէս վատ աչքով են նայում թէ ուսման և թէ ուսումնարանի վերայ։

*Շողեր.* Ո՞վ գիտէ. հազար ու մի պատճառ-



ներ են ասում, որ մէկը պատմեմ. ասում են որ ուսում առած աղջկերքը չեն հաւանում իրենց հօրն ու մօրը, ծիծաղում են նոցա վերայ, ծերութեան ժամանակ չեն օգնում նոցա, իրանց զարդարանքների վերայ են միայն մտածում, ժամ չեն սիրում, եկեղեցի չեն գնում, որովհետև աւելորդ են համարում և շատ այսպիսի բաներ, որ մէկն ասեմ։

*Սաթինիկ.* Բայց մի՞թէ բոլոր ուսում առած աղջկերքը այդպէս են. կան և լաւերը. ուսումը ի՞նչ մեղաւոր է. վատ աղջիկն է որ ուսումնարանի անունը կոտրում է. և եթէ լաւանայ մի օր, գիտենաս որ այդ էլ ուսման շնորհիւ է. մենք գոնէ այդպէս ենք հաւատացած։

*Համասփիւռ.* Ի՞ հարկէ ուսումը և ուսումնարանը թէ չլաւացնեն, չեն վատացնի մարդուն, բայց կան և կարելի է ասել շատ են, այնպիսի ուսում առած աղջիկներ, որ Աստուած աղատէ թէ ինչեր են, հպարտ, մեծասիրտ, Աստուած հեռու տանէ եթէ մայրը կամ հայրը ասեն նորան թէ այս բանը այսպէս չէ, այսպէս պէտք է լինի. ո՞հ, այն ժամանակ տես թէ էս քու ուսում առած աղջիկը ինչ պատասխաններ է տալի հօրն ու մօրը, «դուք ի՞նչ էք հասկանում, սէր « սպիտակից ջոկել չէք իմանում և դեռ խօսում « էք. մենք կեանքներս մաշել ենք ուսումնարա-

« Նում, սովորել ենք, գլուխ ենք ցաւացրել թէ ինչ
« է ձեր դատարկ խօսքերը լսենք, ձեր յիմար հրա-
« մաններրը կատարենք. սուրբը որն է, ուխտը ինչ
« է, ինչ ժամ, ինչ պատարագ, ինչ ողորմութիւն.
« ես ինձ զրկեմ իմ զուարճութիւններից, գեղե-
« ցիկ ուտելուց ու հագնելուց, պարելուց ու
« քէֆ անելուց, թէ ինչ է ժամ պէտք է գնամ,
« աղօթք պէտք է անեմ, մոմ պիտի վառեմ.
« տանն էլ կարելի է աղօթել. աղքատներին
« ողորմութիւն պիտի տամ, ուխտ պիտի
» գնամ, ես ինչ գիտեմ ինչ բաներ. ինչու,
« ինչու համար», այս դեռ վերջացած չէ, այժմ
դու տես սաղ օրով նա խռովում է իւր ծնող-
ների հետ, յօնքերը կիտած, բարկացած այս ու
այն կողմն է մանդալի, կամ մի գիրք է վերց-
նում ձեռքը իբր թէ կարդում է. տունն էլ որ
քանդուելու լինի նա օգնութեան չի հասնի, որով-
հետև բարկացած է. այս էլ դեռ ոչինչ. երեկոյ
է դառնում, մէկ էլ տեսնես այս մեր ուսում ա-
ռած աղջիկը գլխարկը ծածկած, ձեռնոցները
ձեռքին հագնելիս, հովանոցակը կռան տակին,
հովհարն էլ ձեռքում, լաւ զուգուած զարդա-
րուած մօտենում է մօրը և ծուռ աչքով նայե-
լով նորան ասում է, «ես գնում եմ». «Ո՞ւր,
որդի» ահուդողով հարցնում է մայրը. «էլ ուր
պիտի լինի, փոքր ինչ զբօսնելու, օդ ծծելու»,
բարկացած պատասխանում է աղջիկը և գնաց.



Л. ТЕР-ОГАНЯН
С.С.Р.А. Центральная Библиотека
7/XI-1922
имени Масникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1001
Т181

ահա նա անցնում է փողոցներով, աջ ու ձախ
բարևում է ընդոյշ ժպիտը երեսին, նա մենակ
չէ, ծանօթներ շատ ունի, բայց թէ ուր
է գնում և թէ երբ կդառնայ տուն, այդ Աս-
տուած միայն գիտէ, այս էլ ոչինչ. ուսումը ա-
ւարտեց, մնաւ իւր տունը, այժմ տունը չէ հա-
ւանում, տունը փոքրութիւն է անում, նա պա-
հանջում է մի քանի սենեակներ, պարկետ տախ-
տակամածով, պատերը ծաղկէթղթով զարդա-
րուած և այն և այն. այժմ դու տես խեղճ
ծնողների հայը. իրենց ուսում առած աղջկայ
կապրիզները կամաց կամաց կատարում են,
տունը փոխում են, մի քանի սենեակներով
բնակարան են վարձում, մեծ բրէհ են տալիս
և շուտով պարտքի տակ են ընկնում և նրանց
ունեցած չունեցածը աճուրդով (տօրգով) է
ծախւում. այս էլ ոչինչ. նրա հետ ուզում են
ամուսնանալ միջակ կարողութեան տէր երիտա-
սարդներ, նա չէ հաւանում և ինչ է ասում «սա
ոերտուկ չունի հագին, արխալուխ ու չուխայ
ունի, ես դորան չեմ ուզում. իսկ նա մանրավա-
ճառ է կամ արհեստաւոր, նորան էլ չեմ ուզի.
միւսը, ուսում առած չէ, ինչ կանեմ ես նորան.
երրորդն էլ բաղաղ է... և այն և այն». և այսպի-
սով տանը ծերանում է և ոչ ոքին չէ հաւա-
նում։ Վերջապէս որ մէկն ասեմ. այնպէս որ

խեղճ ծնողները դառն արտասուք թափելով, անիծում են այն օրը, երբ ուսումնարան տուին իրենց աղջկանը. ահա այսպիսի պատճառներ կան, որոնցից վախում են մեր մայրերը, և դուք չ'կարծէք թէ այս ինձանից եմ շինում և ասում, ոչ, ոչ. այս աղջկանը ես ինքս ճանաչում եմ, մեր հարևան էր. բայց թէ ով է, ես ձեզ չեմ կարող ասել։ Այս էր պատճառը, որ երբ ես տասը տարեկան դարձայ, իմ կնքահայրս կամեցաւ ինձ որսումնարան տալ իւր ծախսով, բայց մայրս չուզեց և ասաց «լաւ է իմ աղջիկը քաղցած մնայ, դռնէ դուռը հաց մուրայ, քան թէ ուսումնարան գնայ, լկստուի ու լրբանայ. այն օրից ահա ես հովուհի եմ և այսպէս եմ անցկացնում իմ օրերս։ Բայց էլի իմ սիրտս կպած է ուսումնարանին և ես սիրում եմ։

*Արուսեակ.* Բայց ես քեզ հաւատացնեմ, Շողեր, ուսումնարանը մեղաւոր չէ. ես էլ այդպիսի աղջիկներ շատ եմ տեսած, բայց ուսումնարանը ինչ անի. ուսումնարանը սուրբ տեղ է, որտեղ միայն ազնիւ և օգտակար բաներ են սովորեցնում. ես կարծեմ մեղաւոր է մեր տունը, ուր մեք լսում ենք շատ անգամ մեր ծնողներից անէծք, հայհոյութիւն, բանբասանք սորա նորա վերայ, յետոյ գալիս ենք ուսումնարան և մէկ մէկու պատմում ենք ամեն մէկս մեր լսածներն ու տեսածները. 'ի հարկէ մեր ծնողները մեղաւոր չեն, ինչ որ լսել են և ինչ որ տեսել են իրենց ծնողներից, նոյնը և մեզ են ցոյց տալի, բայց եթէ նոքա ուսում ունենային, օգտակար ու ազնիւ խօսքեր միայն լսէին իրենց ուսուցիչներից, լաւ խրատական գրքեր կարդային, միթէ նոքա այդպէս կվարուէին. միթէ նոքա իրենց փոքրիկ երեխաների առաջ կանիծէին կամ կբամբասէին, չէ որ նոքա սովորած լինելով կհասկանային որ երեխան կապիկի նման շատ է սիրում տեսածն ու լսածը իւրացնել, իրան սեպհականացնել. այն ժամանակ նոքա շատ զգոյշ կլինէին իրենց թէ վարմունքի և թէ խօսքերի մէջ. եթէ նոքա այդ զգուշութիւնը չունեն. այդ նորանից է, որ ուսում չունեն. ինչ որ տեսել են ու լսել, նրան են հաւատում և կարծում են որ այնպէս պէտք է լինի. ուրեմն, իմ կարծիքով, ուսումնարանը ոչ թէ մեղաւոր չէ, այլ և սուրբ է և օգտակար։

*Համաստիւռ.* Ա՜խ Աստուած, կգայ արդեօք մի ժամանակ, որ մեր մայրերն սիրեն ուսումնարանը, այնպէս չանիծեն ուսումը, ինչպէս այժմ, դժողքը նրանց համար աւելի լաւ է, քան թէ ուսումնարանը, քանի քանի անգամ տեսել եմ մեր հարևանի աղջիկը ուսումնարանից գալիս, գրքերը ձեռին. երանի եմ տուել նորան.

քանի անգամ խնդրել աղաչել եմ մօրս, որ ինձ էլ տայ ուսումնարան, բայց ա՜խ, բարկացել է ինձ վերայ ու ծեծել է ինձ դրա համար և արգիլել է մինչև անգամ մեր հարևանի աղջկայ հետ խօսելն ու խաղալը. լաց եմ եղել ամբողջ գիշերով. բայց ինչ օգուտ. վերջը տեսնելով որ ոչինչ չէ լինում, ես էլ Զողերն էլ, տանը գործ չունեցած օրերը գալիս ենք մեր եղբայրների հետ և արածեցնում ենք այս ոչխարները. սորանով գոնէ գտնում ենք մի մխիթարութիւն մեր այրուած ու խորուած սրտերին։

*Սաթինիկ.* Ուրեմն դուք մենակ չէք։

*Համասփիւռ.* Ո՛չ, սիրելի մեր եղբայրները իջան ձորը ջուր խմելու և մեզ համար էլ բերելու։

*Շողեր* Ահա նորա բարձրանում են։

*Նուարդ.* Գնանք քոյրիկներ. բաւական նստեցինք այստեղ. բարով մնաք սիրելի Զողեր և Համասփիւռ. մի տխրէք. Աստուած ողորմած է, ձեզ էլ մի ուրիշ բանով կմխիթարէ. ինչ անենք. ծնողներն էլ մեղաւոր չեն. մինն է կոտրում հազարի անունը. մի քանի ուսում առած վատ աղջիկներ, կոտրում են թէ ուսումնարանների և թէ ուսում առածների անունը. ժամանակը այդ ամենը կփոխի, այդպէս չի մնալ ի հարկէ։

*Շողեր եւ Համասփիւռ.* Ընորհակալ ենք, սի-



րելի քոյրեր։ Զմոռանաք մեզ, բարով գնաք. Աստուած ձեր սրտի խորհուրդը կատարի։

*Խմբակ.* Ընորհակալ ենք, չենք մոռանալ, կը յիշենք ձեզ. մնաք բարև։

*Հովուհիք.* Գնա՛ք բարեաւ. Աստուած ձեզ հետ։

---

Խմբակի մեկնելուց յետոյ, Զողերն ու Համասփիւռը բաւական միջոց տխուր նստած խմբակի գնացած ճանապարհին էին նայում արտասուոտ աչքերով. այո՛ սոքա շատ սիրեցին խմբակին, որովհետև տասը հոգի միացած, մի համոզմունքով, խորհուրդներն մէկ արած գնում են, իրենք էլ չգիտեն ուր, բայց մի սուրբ, մի պաշտելի նպատակով՝ ուսման մայր գտնելու իրենց և իրենց խեղճ հայ քոյրերի համար. «ինչ բարի աղջիկներ են. փառք քեզ Աստուած.» մտածում էին Զողերն ու Համասփիւռը, երբ ընդհատեց նոցա լռութիւնը Զողերի եղբայրը որը սիսներից առաջ էր ընկել և շուտ շուտ բարձրանում էր դէպի ձորափը, ուր նստած էին հովուհիները։

Ինչո՞ւ են թաց ձեր աչքերը, ինչ է պատահել, ովքեր էին այն աղջկերքը, հետաքրքրութեամբ հարցրեց նա։

Զողերը պատմեց նորան այն ամենը ինչ որ

լսել էր. նորա խօսքերը միշտ ախ ու հառաչանքով էին սկսում և վերջանում։

Խեղճ աղջիկներ, հաղիւ մոռացել էին իրենց նախկին վիշտը ուսումից զուրկ լինելու պատճառով, և ահա այժմ նորից նորոգուեց այն. տխուր են նորա, բայց ինչ պիտի անեն. արդէն ուշ է. եթէ չվախենային իրենց ծնողներից, կը-թողնէին ոչխարները, վերջին բարևը կտային իրենց եղբայրներին և հենց այդ ձորափից կընկերանային խմբակին՝ ուման բարի մայրը որոնելու. բայց դժուար բայլ է այդ Հայ աղջկայ համար. բաւական է և այն՝ որ նորա այս գիշեր ուզեն չուզեն պատի պատմեն իրենց ծնողներին այդ անցքը. պիտի լան և արտասուեն. իսկ ծնողը. Աստուած ազատէ, թէ ինչ տեսարան պիտի լինի այս գիշեր նոցա տանը։

---

## ԱՊԵՐԱԽՏ ԴԱՐԻՆԿԷՆ ԵՒ ՏԻՐԱՍԷՐ ՀՈՌՄՍԻՍԸ

Խմբակը գնում էր արագաբայլ, ծառազարդ ձորերի միջով, կարկանջուն գետակի ափով. նա չէր զուարճանում բնութեան գեղեցկութիւնով. նա շտապում էր իւր բարի մայրը գտնելու, իւր նպատակին հասնելու. ոչ ծառերով ծածկուած բարձրադագաթ լեռներն էին նորան հետաքրքրում, ոչ ձորամիջի կարկանջահոս գետակն էր նորան զուարճացնում, ոչ դալարի արօտների մեղմ հովիկից տատանուելն էր նորան գրաւում և ոչ թռչունների անուշ դայլայլիկներն էին նորան հիացնում, նա Ղովտի և նորա աղջկերանց նման ձեռք ձեռքի բռնած շտապում էր իւր ճանապարհի երկարութիւնը կտրելու, օր առաջ իւր նպատակին հասնելու։

Նա նմանւում էր չւոդ կռունկների երամին, որ աշնան դէմին եռանկիւն կամ բոլորակ շրջան կազմած բարձր օդի մէջ իրենց կռիւններով օդն են հնչեցնում և օր առաջ շտապում են հասնել տաք երկիրները իրեց կեանքի գոյութիւնը պաշտպանելու համար. գնում է այն կռունկների նման և այս աղջիկ խմբակը իւր կեանքի գոյութիւնը ապահովելու, ուսման մայր որոնելով, ուսում ձեռք բերելով։

Այդ ուսման սէրն է, որով ոգևորուած է խմբակը. նա ոչ յոգնածութիւն է զգում, ոչ սարսափ է կրում, ոչ քաղց ու ծարաւ է յիշում, այլ զօրեղ քայլերով յառաջ է գնում. միայն ծնողաց կարօտն է քաշում, տոչորւում է և այրւում. որովհետև դեռ նոր է բաժանուել ծնողից, դեռ ծնողական գրգռանքն ու փայփայանքը աշխոյժ են և կենդանի իւր յիշողութեան մէջ. դեռ ևս իրան իւր ծնողական գրկի մէջն է զգում, իւր

ծնողաց բազուկների հովանաւորութեան տակն է կարծում։

Որքան էլ մեծ է խմբակի ուսման տենչը և բարի մայր գտնելու փափագը, այնու ամենայնիւ երկար ճանապարհորդութիւնից յոգնածութիւն է զգում. և ահա մի հարիւրամեայ կաղնի ծառի հովանոյն տակ նստում է նա հանգիստ առնելու իւր յոգնածութեանը։

Փառք քեզ Աստուած, ուր էինք երեկ այս ժամանակ, ուր ենք այժմ, ասում էր Նազելին. երեկ այս ժամանակ, մեր սիրելի մայրերի առաջ նստած՝ նոցա քաղցր խօսքերն էինք լսում. այսօր այս ձորերի միջին՝ ջրերի կարկաջիւնն ենք լսում. երեկ մեր տան յարկի տակ ապահով էինք և աներկիւղ, այսօր այս սարսափելի սարերի տակ ահուդողի մէջն ենք, գիշերն էլ որ վրայ հասնի, ինչ պիտի անենք։ Տէր Աստուած, դու եղիր մեր հայրը, դու մեզ պահիր այս օտարութեան մէջ, օրհնիր մեր ճանապարհը, հասցրու մեզ մեր Նրպատակին։

*Վարդիթեր.* Տեսնում ես Նազելի, քանի որ մեր տանն էինք, այնքան նշանակութիւն չէինք տալի աղօթքին, կարօտութիւն չէինք զգում աղօթքի մէջ, այդպէս ջերմեռանդօրէն չէինք դիմում Աստուծուն, ահա թէ որտեղ է մարդը ապաւինում իւր Արարչին՝ զրկանքի, կարօտութեան, պանդուխտ միայնութեան, խեղճութեան, սարսափի և յուսահատութեան մէջ։



*Նարգէզ.* Եւ հէնց այդպիսիներին է օգնում. մենք էլ պանդուխտ ենք և միայնակ, անտէր ենք ու անպաշտպան. ով Աստուած, դու եղիր մեր Տէրը, մեր պաշտպանը. մեզ անփորձ պահիր, մեր նպատակին հասցրու, դարձեալ մեր սիրելի ծնողների տեսութեանը արժանացրու. այո՛ Աստուած ջան. քաղցր են ծնողքը՝ որ դու մեզ պարգևել ես. այժմ աւելի ենք գին դնում, աւելի ենք սիրում մեր ծնողներին, որովհետև գրեթէ որբացած վիճակի մէջ ենք. ա՜խ Աստուած, ինչպէս են չար որդիքը նեղացնում իրենց ծնողներին, մի՞թէ նոցանից աւելի քաղցր բան կայ աշխարհիս երեսին. ո՛չ, ո՛չ. ով Աստուած, առողջ և անփորձ պահիր մեր սիրելի ծնողներին, որ կրկին մենք նոցա գըրկենք և կարօտով համբուրենք՝ քեզ էլ, ով Աստուած փառք տանք և ուրախ սրտով աղօթենք։

*Սրբուհի.* Ով գիտէ ինչքան արտասուք են թափում նորա այժմ մեզ համար. դուցէ գոյան էլ մինչև անգամ թէ ինչու թողեցին մեզ. բայց ինչ անեն, նորա շատ լաւ են իմանում որ եթէ մենք այժմ չչարչարուենք, վաղը միւս օր անպէտք կլինենք և միայն ծանրութիւն՝ թէ իրենց և թէ մեզ համար. ա՜խ խեղճութիւն, աղքատութիւն. ում չես ձգել դու սարէ սար ու քարէքար։

*Նազիկ.* Ոչինչ սիրելի քոյրեր. ի հարկէ եթէ միջոց ունենայինք, բարի մայր որոնելու կարողութիւն էլ չէինք ունենայ. բայց ամենքն էլ հաւասար լինել չեն կարող. հարուստն էլ պէտք է լինի, աղքատն էլ, որ հարուստը աղքատին օգնէ. ուսում առածն էլ պէտք է լինի, անուսումն էլ, որ մէկը միւսից օգուտ քաղէ. ուժովն էլ պէտք է լինի, որ անոյժ տկարին օգնութիւն հասնէ, առողջը հիւանդին, խելօքը յիմարին. այս անհաւասարութիւնը պէտք է լինի. և մեր այս ճանապարհորդութիւնը այս միայնակ պանդխտութիւնը, այս մեր գրէթէ որբութեան վիճակը պիտի լինի մեր *առաջին ուսումնարանը*. սորանով մենք կհասկանանք խեղճերի վիճակը. սորանով գին կդնենք մենք մեր սիրելի ծնողների մեզ վերայ ունեցած աշխատանքին. այո՛ ապրել աշխարհում առանց չարչարանքի՝ ահա՛ տեսնում ենք որ չէ կարելի։

*Նարգէս.* Բայց ինչպէս ապրել. ահա՛ այն հովուհիքն էլ էին ապրում. բայց ապրելու մէջ զանազանութիւն կայ. հասկանալ թէ ինչու համար է մարդս ապրում. նա միայն իւր համար չի ապրում, իրանով չէ ապրում. այլ նա ապրում է և ուրիշների համար և ուրիշներով։

*Սրբուհի.* Ճշմարիտ է. պէտք է հասկանալ ապրելու պայմանները և ինչով կարելի է հասկանալ՝ եթէ ոչ այսպէս խեղճութեան մէջ փորձուելով և ուսումով. որի համար ահա՛ թողել ենք տուն, տեղ. հեռացել ենք հօրից, մօրից. բաժանուել ենք եղբայրներից, քոյրերից. և սարեր ու ձորեր չափելով՝ գնում ենք մի փրկութիւն գտնելու, մի բարի մայր որոնելու մեզ և մեր նման խեղճ Հայ աղջկերանց համար, որոնց վիճակը ուսումով միայն կարող է լաւանալ։

*Նուարդ.* Արդեօք այսքան չարչարանքից յետոյ հասնելու ենք մեր նպատակին, գտնելու ենք մեր որոնած բարի մայրը և գտնելուց յետոյ կընդունի՞ արդեօք մեր որդիութիւնը, թէ չատ հարուստների նման, նա ևս իւր պաճուճանքների, իւր կահուկարասիքների, իւր ճոխ պալատի, իւր շռայլ զուարճութիւնների վերայ միայն մտածելով, աւելորդ կհամարի մեր խնդիրքը կատարել, գուցէ և զզուանօք նայի մեր երեսներին։

*Արուսեակ.* Այո՛ շատ կան հարուստ ծնողներ, որոնք իրենց արծաթը հարազատ որդուոցն անգամ խնայում են, թէպէտ տալիս են իրենց որդուոց ուսման ծախսը, բայց վայ այն տալուն. առաջինը՝ որ խնայելով, ափսոսալով են տալի և երկրորդ՝ որ առանց հաշուի են տալի, դէն ձգածի նման. ինչու՞, որովհետև նոքա իրենց որդիքը չեն տալի ուսումնարան այն նպատակով՝ որ նոքա ուսում առնելով՝ զարգանան,

կրթուեն, դաստիարակուեն և պէտք գան իրենց ազգին կամ այն հասարակութեանը՝ որի մէջ ապրում են իրանք. ոչ։ այլ մի անուան համար միայն, որ ասեն թէ այս ֆլանի աղջիկը ուսումնարանումն է աւարտել, ուսում առած աղջիկ է, և այլն, և այլն։

*Սաթինիկ.* Ինչ որ տարուայ մէջ այդ հարուստ ծնողները վճարում են իրենց որդւոց ուսման համար՝ քանի քանի անգամ ես լսել եմ, որ տասն անգամ աւելի են դէն ձգում մի աւելորդ և շռայլ քանի համար. իսկ երբ դիմում է նոցա օգնութեանը հաց կամ ուսում խնդրող մի խեղճ՝ հայհոյելով ու ծեծելով են դուրս ձգում տան շէմքիցը։

*Սրբուհի.* Հեռու ուր էք գնում, մի շաբաթ կլինի, որ մի հարուստ կին պարահանդէս գնալու համար միայն ծախսեց մինչև երեք հարիւր երեսուն և վեց ռուբլի նորաձև շորի և երկու զարդարանքի համար. այն ինչ նոյն կնոջ դռնից միշտ դատարկ ձեռքով են յետ դառնում մի որ և իցէ ուսումնարանի կամ խեղճի համար թուղթը ձեռքին ստորագրութիւն հաւաքողները։

*Վարդանուշ.* Այդ դեռ այնքան զարմանալու չէ. ես կպատմեմ ձեզ մի դէպք, որ իմ եղբայրս իւր աչքով տեսել է. այդպիսի մի կին յատուկ մի պարերեկոյի համար իւր աղջկայ անկուածներին ու զարդարանքներին համարել է մինչև հազար հինգ հարիւր ռուբլի. այն ինչ այդ կնոջ մօտ պարերեկոյից երկու օր առաջ գալիս է իրեն մեծացնող նախկին դայեակը, որը այնքան խնամք է ունեցել դորայ վերայ, որքան կարող է ունենալ մի հարազատ մայր իւր հարազատ որդւոյ վերայ. այդ դայեակը գալիս է ընկնում դորա ոտները, արտասուքը աչքերին, աղիողորմ ճչալով ու լալով օգնութիւն է խնդրում. երկու որդիքը քրդերը սպանել են, մարդուն իւր առջև կտրատել են ու թրատել, իսկ տասն և վեց տարեկան աղջիկն էլ գերի են տարել և դորան ասել են եթէ տասը ոսկի կբերէ, աղջիկը յետ կստանայ։ Ճանապարհից յոգնած խեղճ կինը, թոզոտ, պատառոտուն շորերով, քաղցած ու ծարաւ, ինչ էք կարծում, ինչ է լսում այն հարուստ կնոջից, որին իբրև իւր հարազատ որդի սնուցել է կաթով, մեծացրել է մայրական խնամքով, հինգ տարեկան հասակին ջրիցն է ազատէ, բոլոր դրացիքը վկայ են այդ անցքին, տասներկու տարեկան ժամանակը, երբ գիշերը հրդէհ էր նոցա տանը, ամենից առաջ դորան է ազատում կրակից և գրկելով տանում է դրացու տունը, յետոյ ազատում է դորա միւս քոյրերին ու եղբայրներին, քանի քանի նեղութիւններ է կրել դորա համար. և այժմ կարօտութեան և

այդպիսի դառն հալածանքի մէջ դիմում է իւր ձեռնասուն խանումին մի օգնութիւն հայցելու, ոչ անողորմ կին, ապերախտ մեծատուն. «ով իս
« քա. արհամարհանքով պատասխանում է նորան,
« էս լրբիրը խաչագողի հանգի մէգլուխ հէնց
« կլպելու ին հադիր. ռադ էլի գլխեմէս թէ
« քու Աստուծը կու սիրիս է. իս ինչ անիմ
« թէ քու աղջիկը բրդիրն ին փախցրի. ես չէ,
« ով է քիզ ճանչնում, իմ նեանկէքն ու գու-
« վերնանտկէքը նեմիցնիր ու ֆրանցուզնիր ին
« էլի. դուն վուրդանց իս լուսն նընգի. էս
« նմուտին էլ ռուս ու վրացի ունիմ. հայն ոմ
« է սնցրի իմ տան մէջ. գժուրի իս քա. գնա
« գնա, վուրդանց էլ վուր էկիլիս. իս քիզ չիմ
« ճանչնում։

«Օտացդ մեռնիմ, Դարինկայ խանում, ճար
« մը ըրէ ինձի, մեղք եմ Աստծու սիրուն.
« իմալ թէ չես ճանչեր, Հոռոմսիմը չես ճանչեր.
« գիմ կոթ չես ծրծեր». ասում է յուսահա-
« տուած Հայ պառաւ կինը։

«Անունս էլ ա գիտացի, քա. վոյ իմ աչ-
« քին, խաղք խայտառակ էլայ լակէիս ու գու-
« վերնանտկիս առաջ. ֆու պրակլեատայա ստա-
« ըուխա. Նիկալայ. վրյգնի եվո կչօրտու». ա-
« սաց ու հեռացաւ։

Ծառան կնոջը հրելով երբեմն էլ խփելով



դուրս է ձգում տանից։ Հենց այդ ժամանակ պատահում է նորան տիկին Դարինկայի քոյր օրիորդ Նատաշէն՝ նոր ուսում աւարտած. որը ճանաչում է իւր նախկին ծծմօրը, բայց փոխանակ կարեկցելու և հարցնելու նորա վիշտը, ծաղրելով ասում է իւր ընկերուհուն «նու Սո-
« նիչկա. կակայա կրասօտկա. ֆու. աղսկայա
« վէյդմա». յետոյ դառնալով դէպի թշուառ պա-
« ռաւը, դարձեալ ծաղրում է նորան «իմալ իս,
Հոռոմսիմ. իմալ քո ճժեր, քո պժեր». և դեռ պատասխանին չսպասած, հռհռալով ու ղնճռտալով մտնում են ներս, պատուիրելով լակէին փակել պաղեզդի դուռը։

Նարգէզ. Ի՜նչ անաստուած կին և ինչ անանամուս աղջիկ. վայ, վայ. այդպէս վարմունք կլինի. ախ Աստուած, չէ՞ որ դու խեղճերին օգնում ես, հապա իչու այն խեղճ պառաւ կինը, բացի իւր ընտանեկան թշուառութիւնից, այսպիսի նոր թշուառութիւն էլ է տեսնում. ախ Աստուած, ինչքան անիրաւ մարդիկ կան աշխարհում, խեղճ կին։

Նուարդ. Հալով. ի զուր է ուրեմն մեր այսքան չարչարանքը. ով պէտք է մեզ օգնէ. բոլոր հարուստներն էլ այդպէս են, մենք դարձեալ կմնանք որբ և ուսման կարօտ. դարձեալ մեր խովերը կլինեն մեր վերջին ապաստանարանները.

եթէ այդքան աշխատաւոր կնոջը այդպէս հալածեցին, մեզ այսքանիս ով կընդունէ, ով կխնամէ, ով յանձն կառնէ մեզ բարի մայր լինելու։

*Վարդիթեր.* Չպէտք է յոյսերս կտրենք, Նուարդ, էնց դրա համար էլ առաջին անգամ ես ասացի թէ կարող ենք դիմանալ պանդխտութեան, չարչարանքներին. քանի կարող ենք կորոնենք բարի մօրը, գտնելուց յետոյ կաղաչենք նորան որ մեզ որդէգրի. իսկ եթէ չի յաջողուի, դարձեալ մեր խուզերը, դարձեալ մեր ծնողները նոյն խուզերի մէջ. զոնէ մեր պարտքը կիսով չափ կատարած կլինենք. յետոյ մի համեստ աշխատանքով կապրենք մենք և կապրացնենք մեր ծնողներին. ինչ անենք, յուսահատուելով ոչինչ չի լինի. և մի թէ բոլոր հարուստ տիկինները այդպէս անողորմ կլինեն. ոչ, ոչ. կլինեն և բարի հարուստներ, որոնք կխղճան, կկարեկցեն և կօգնեն. յոյսերս Աստուծոյ վերայ դնենք և Աստուած կլինի մեր օգնականը։

*Նարգէս.* Զարունակիր, Վարդանուշ, քո ըսկսած պատմութիւնը, տեսնենք վերջը ինչ եղաւ. թշուառների պատմութիւնը մեզ համար օգտակար դաս է։

*Վարդանուշ.* Ինչպէս ասացի, պարերեկոյից երկու օր առաջ Հռոմսիմը եկաւ իւր հարուստ



Դարինկայ խանումից օգնութիւն խնդրելու և մերժուեցաւ։

Դարինկայի տան բակումը մի առանձին տեղ կար, ուր մշակներ էին քնում գիշերները. նոցա մօտ է լինում և պառաւ Հռոմսիմը, որովհետև իւր երկրացիք էին. այն յուսով թէ դուցէ խղճայ իրեն իւր ձեռնասուն խանումը։

Պարերեկոյից շատ ուշ է գալիս տիկին Դարինկան իւր աղջկայ հետ և պարկում են քնելու. առաւօտեան դէմ, մօտաւորապէս ժամը 5-ին մեծ հրդեհ է պատահում այդ տան մէջ։ Տունը այրւում է բայց կրակը դեռ չի հասել Դարինկայի բնակարանին. բոլորը ոտքի վերայ են, տունը շրջապատած է հրդեհաշէջներով և ժողովրդի բազմութիւնով. չնայելով այս դալմաղալին, Դարինկան քնած է, քնած են և աղջիկը և բոլոր ծառաները. և թէպէտ սենեակները արդէն լցւում են ծխով, բայց Դարինկան և իւր աղջիկը չեն զգում, որովհետև հրեկոյեան շատ պարելուց, այժմ սաստիկ յոգնած ընկած են։

Հռոմսիմը, չնայելով որ մերժուել էր իւր ապերախտ խանումից, բայց էլի տիրասէր էր, որովհետև Հայաստանցի էր և տիրասիրութիւնը Հայի հարազատ յատկութիւնն է. նա էլ ժամանակ չկորցրեց, ջահելի նման թռաւ տեղից, բարձրացաւ իւր խանումի ննջարանը, որը միսով լը-

ցուած էր, զարթեցրեց, հապցրեց, դուրս ուղարկեց. հասաւ աղջկանը, նորան էլ այդպէս. հասաւ ծառաներին, աղախիններին, բոլորին էլ փըրկեց. ընկաւ աջ ու ձախ, այս ու այն անկիւնը, հանեց թանկագին իրեղէնները, տուեց ծառաներին, մշակներին. մինչ այս, մինչ այն, արդէն ոչոք չմնաց, բոլորն էլ փախան. կրակի բոցը արդէն ճենեակի մէջն է, իսկ ճենեակը մխի մէջ կորած. բոլորին ազատեց Հայաստանցի Հռոմսիմը, բայց նորան ազատող չեղաւ, ահա նա ուզում է դուրս գալ, ճանապարհը չէ գտնում, մուխը շատ է. աչքերն է ուզում բաց անել՝ չէ կարողանում. շունչ է ուզում քաշել՝ խեղդւում է. ձայն է ուզում հանել՝ բերանը մխով է լցւում. վերջապէս հաւաքում է իւր օրհասական վերջին ուժը և հազիւ կցկտուր ձայնով կարողանում է արտասանել իւր վերջին խօսքերը. «Ովքն Աստուծուն, օգնեցէք խեղդուայ... խանըմ ջան... մեռայ.., եաման... հասէք... վա՜խ... վա՜խ... Նազլու...»

Նա չկայ այլ ևս. նա աւանդեց իւր հոգին. նա զոհ գնաց իւր ապերախտ Դարինկայ խանումին, որին մեծացրեց, փրկեց շատ տեսակ փորձանքներից և այժմ ահա մխից խեղդուած ու մեռած, թողնելով իւր Նազլու աղջիկը քրդերի ձեռքին անմայր ու սնպաշտպան.



*Նազլի*, Խեղճ Հռոմսիմ. վերջին անգամ իւր Նազլու աղկայ անունն է տուել. ինչ կնշանակէ ծնող. ախ Աստուած դու մեզ անփորձ պահես, մեր սիրելի և թանկագին ծնողների տեսութեան արժանացնես.

*Նուարդ*. Խեղճ Նազլու, ինչ պիտի անես դու այժմ. առանց մօր. քրդերի ձեռքին, ով քեզ պիտի ազատէ նոցանից. օ՜ֆ անդուխ աշխարհ. ինչ է մեր կեանքը, Տէր Աստուած, տանջանք, չարչարանք, լաց, արտասուք, վիշտ, յուսահատութիւն.

*Սաթենիկ*. Բաւական է, սիրելի Նուարդ, քանի օ՜ֆ քաշես. Աստուած է Նազլուի տէրը. շարունակիր Վարդանուշ.

*Վարդանուշ*. Հռոմսիմի գլխով անցած դըժբաղտութիւնը ոչ ոք չգիտէ. հրդեհաշէջները մեծ ջանքով սկսում են քանդել տան ծածքը, պատուհանները, դռները, մի քանիսներն էլ մտնում են ներս, և ով Աստուած, ինչպէս սառած են մնում, երբ տեսնում են իրենց ոտի տակ ընկած մի պառաւ կին մխից խեղդուած, բոլորովին սեացած. իսկոյն հանում են բակը. այս որ տեսնում են բակում հաւաքուած մարդիկը, իսկոյն հաւաքւում են Հռոմսիմի դիակի շուրջը, քանի գնում է բազմութիւնը շատանում է. հարցուփորձ, թէ ով է, ինչպէս եղաւ, ամենքը խղճում են. ամենքի աչ-

քից արտասուք է թափում. իսկ Դարինկան աշխատում է ծածկել պատահած դէպքը, ուզում է թագնուիլ, բայց մշակները վաղուց արդէն որոնում էին Հոռոմսիմին և այժմ որ տեսան՝ յարձակուեցան Դարինկայի վերայ կատաղութեամբ և թիքայ թիքայ կանէին եթէ մէկ կողմից ոստիկանութիւնը, միւս կողմից կողմնակի մարդիկ չազատէին Դարինկային. մշակներին յայտնի էր ամեն ինչ. վերջապէս Դարինկան չէր ուզում թաղման ծախսն հոգալ մինչև անգամ, բայց վախենալով մշակներից, իւր ծանօթների ձեռքով մի չնչին գումար ուղարկեց մշակներին որ հոգան նորա թաղման ծախսը. մշակները յետ ուղարկեցին փողը, չուզեցին. այլ իրանց մէջ մի գումար հաւաքեցին և արժանաւոր վայելչութեամբ թաղեցին խեղճ Հոռոմսիմին ժամ ու Պատարագով։ Միւս օր հաւաքուեցան յիսուն մշակներ, քաջ տղամարդիկ և ճանապարհ ընկան Հոռոմսիմի գիւղը, պատմեցին այնտեղ այս թշուառ անցքը։ Որոնեցին, գտան Նազլու աղջկայ տեղը. և երբ սկսեց մթնել, բոլորն էլ խանչալները հանած մտան այն տունը, ուր քրդերը պահում էին Նազլուին, բոլորին էլ սպանեցին և Նազլուին ազատեցին. նոյն գիշեր փախան գիւղից և ազատուեցան։

*Նուարդ.* Թէպէտ շատ տխուր էի այս խղճալի



պատմութեան համար, բայց շատ էլ ուրախացայ մշակների ցոյց տուած քաջութեան վերայ։

*Վարդանուշ.* Բայց այժմ աւելի կուրախանաս, երբ կլսես Նազլուի խորամանկութիւնը։ Այն օրը, երբ Նազլուին գերում են Քրդերը, նա նրանց խաբում է—ընկնում է ոտները և ասում «խնայեցէք իմ կեանքս ես ձեզ օգուտ կը տամ» և հանելով գրպանից մի նամակ հայերէն գրած, ցոյց է տալի նոցա և ասում «ահա այս « նամակը ես ստացայ Տ.... քաղաքից, իմ եղ- « բօրից, որը այնտեղ մշակութիւն է անում. նա « ինձ գրում է թէ այնտեղից գալիս են Ս. Կա- « րապետ ուխտ անելու հարուստ ուխտաւորներ « և վանքի համար բերում են իրենց հետ շատ « թանկագին ընծաներ. իրանք էլ շատ հարուստ « են և շատ փող ունեն հետները. երկու շաբա- « թից յետոյ կերևան». այս ասելուց յետոյ, դարձեալ ընկաւ ոտները և ասաց «ինչ օգուտ եթէ « դուք ինձ սպանէք, ահա հարուստ ուխտա- « ւորներ, պատրաստուեցէք որ նրանց թալա- « նէք. թողէք ինձ ես երթամ»։ Քրդերը հաւատացին, որովհետև Ս. Կարապետի ուխտի ժամանակն էր. Նազլուին շնորհակալութիւն արին և թողեցին նորան որ գնայ ազատուի. Նազլուն փառք տուեց Աստուծուն իւր մտքում և ուրախ ուրախ վազեց իւր կնքահօր տունը։

Անցաւ երկու շաբաթ, Քրդերը ոչ որին չտեսան. բարկացան շատ և երդուեցին որ գտնեն Նազլուին և թիքայ թիքայ անեն. բայց Նազլուն տանից դուրս չէր գալի ահից. շատ որոնեցին, չգտան Նազլուին. բայց մի օր երբ իւր կնքահօր տան դրան առաջ խաղում էր երեխաների հետ, երկու քուրդ, այն քրդերի խմբից, տեսնում են դրան և իսկոյն փախցնում են. ահա զարձեալ խեղճ Նազլուն նոցա առաջ. բայց Նազլուն խելօք է. մշակներն էլ արդէն հասել են և Նազլուին են որոնում, «ինչու դու մեզ խաբեցիր, պէտք է քեզ թիքայ թիքայ անենք». բարկացած գոռում էին Քրդերը. «խղճացէք ինձ, թոյլ տուէք երկու խօսք ասեմ, յետոյ թէ կուզէք սպանեցէք», ասում է Նազլուն։ «Դէ, ասա՛ շուտով, ասա, թէ չէ խանչալը փորդ ենք խրում». խանչալները հանած կանգնած են գլխին, «այդ ուխտաւորները կդան անպատճառ. բայց ո՞վ գիտէ ինչ է պատահել ճանապարհին. դուք շատ լաւ գիտէք որ...» հէնց այս խօսքն էր ասում, որ մշակները յանկարծ մտան քրդերի բնակարանը, երկուսը Նազլուին ազատեցին և միւսները թրերն ու խանչալները շողշողացրին քրդերի գլխներին, ահա բոլորն էլ պարկած են գետնի վերայ։

Այդ մշակների մէջ կար մի քաջ և հսկայ,



մի և նոյն ժամանակ ճարպիկ երիտասարդ Կարօ անունով, որը մի հարուածով կէս արեց քրդերի գլխաւորին, որի անունն էր Ջուհ—Ռայիմ բէգ։

Նազլուն շնորհակալութիւն արեց մշակներին և մանաւանդ Կարօյին, որի հետ և ամուսնացաւ բոլոր մշակների միախորհուրդ համաձայնութեամբ։

*Նազիկ.* Ի՞նչ խելօք աղջիկ է եղել Նազլուն, երանի՞ նորան։

*Արուսեակ.* Հապա Կարօն. ինչ քաջ տղամարդ է եղել, որ մէկ խփելով կէս է արել Քրդերի բէգին. ապրի՞ նա, ապրի՞։

*Սիրանոյշ.* Ի՞նչ լաւ պատմութիւն էր, Վարդանուշ։

*Նուարդ.* Վերջացա՞ւ Վարդանուշ, թէ էլի կայ. թէ կայ՝ պատմիր. շատ սիրով ենք լսում։

*Վարդանուշ.* Վերջացաւ պատմութիւնը. միայն Նազլուն խնդրեց Կարօյին. որ տանի իրան իւր մօր գերեզմանը համբուրել տայ, որ թափէ նորա ցուրտ շիրմի վերայ իւր աղի արցունքը և տայ նորա հոգուն իւր ջերմ ողորմին։ Կարօն կատարեց իւր սիրելի Նազլուի խնդիրը։

*Նազլի.* Ո՞ւր էր, թէ մենք էլ բաղդ ունենայինք գտնելու շուտով մեր բարի մայրը՝ որին որոնում ենք. ինչպէս Նազլուն գտաւ իւր փրկիչն ու պաշտպանը. էհ, Աստուած ողորմած է, նա

կլինի մեր առաջնորդը, նա կտայ մեզ մեր բարի մայրը. դէ՛ վեր կացէք, գնանք քոյրեր. ահա՛ գիշերանում է,

---

## ԾԵՐՈՒՆԻ ՃԳՆԱՒՈՐԻ ՔՍՐԱՅՐԸ

### ԿԱՄ

### ԳԱՂՏՆԻՔ

Խմբակը թողեց իւր հիւրնկալ կաղնին, որի հովանաւոր լայնատերև ճիւղերի ստուերի տակ թշուառ Հոռոմսիմի աղետալի պատմութիւնը լսեց. տխրեց նա, հառաչեց, բայց և գովեց Հոռոմսիմի տիրասիրութիւնը և անձնազոհութիւնը. նոյնքան էլ գարմացաւ Դարինկոյի ապերախտութեան վերայ. այո՛ գեղեցիկ է և սիրելի՝ տիրասիրութիւնը. բայց ո՞րքան գարշելի և զզուելի է ապերախտութիւնը, որը պէտք է չարաչար պատժուի.

Խմբակի յիշողութեան մէջ միշտ կենդանի կը մնան Նազլուն՝ իւր խելքով և ճարտարամիտ խորամանկութեամբ. Կարօն՝ իւր քաջութեամբ և ճարպիկութեամբ և մշակները՝ իրենց հայրենասիրութեամբ։

Եւ ահա՛ այդ տխուր, ուրախ և ոգևորուած տպաւորութեան տակ առաջ է գնում խմբակը։



Ընդակը իւր վերջալուսով վերջին բարևն է տալի բնութեանը և ամպերի գուլաբները ուղեկցում են նորան դէպի հանգիստ. այն կողմ լուսինը՝ գիշերային թագուհին երևում է երկնից մեծ ովկեանոսի մէջ իւր արծաթափայլ ճակատով. նա շրջապատուած է անթիւ, անհամար զօրականներով—լուսաւոր աստղերով։

Հետզհետէ դադարում են բնութեան մէջ ամեն ձայներ, որովհետև դադարում է և կեանքը. չեն լսւում այլ ևս թռչունների սուլելն ու երգելը. լսւում է գիշերային ճպուռի ճռռոցը, լսւում է և ձորի միջից քչքչալով վազող ու քարերի կուրծքերին խփելով հոսող գետակի խոխոջը, որի արձագանքը հարուստ ձայնով կրկնում են լեռնաձորերը գիշերային լուռ խաւարի մէջ. ահա՛ ամեն կողմից լսւում է և ծառերի տերևների խշշիւնը, որ տատանուելով գիշերային մեղմ հովիկից, արձագանք է գտնում բնութեան խաւար ծոցի մէջ։

Ո՜հ, ցերեկը սոքա զուարճացնում էին խմբակին, քիչ էր թէ շատ՝ սորանցմով զբաղւում էր նա. իսկ այժմ՝ սոսկում է և դողում. ծառերի տերևների թեթև խշշիւնը սարսափեցնում է այս անփորձ խմբակին. իսկ գետակի մեծաձայն խոխոջը ահ ու դողի մէջ է ձգել այս խելօ, անմեղ արարածներին։

Բաւական չէ որ տանը չեն, ծնողական գըրկից հեռու, հօր և եղբայրների պաշտպանութիւնից զրկուած, այս գիշերային խաւարի ու մթութեան մէջ են սոսկում ու դողում, ահա այն կողմից և գազանների մեչիանը արդէն պատրաստ է թուլացնել սոցա և ահաբեկուած վայր ձգել. իբրև վերջին միջոց, չորում են ծառերի տակին և աղօթքով Աստուծոյ օգնութեանն են դիմում—«Տէր
« Աստուած. անփորձ պահիր մեզ այս գիշեր.
« շուտով անցկացրու մեզանից այս խաւար ու
« սարսափելի գիշերը և շատ շուտ պարգևիր
« մեզ առաւօտեան լոյսը մենք վախում ենք.
« դողում ենք և սարսափում. անտէր ենք ու ան-
« պաշտպան. դու եղիր մեր տէրը և քո հրեշ-
« տակը թող լինի մեր պաշտպանն ու պահա-
« պանը. չթողես Տէր Աստուած, որ մենք կոր-
« չենք. մեղք ենք մենք. մեղք են և մեր ծնող-
« ները. և ինչ օգուտ մեր կորչելուց. չէ Տէր, չէ.
« դու մեզ չես կորցնի. դու բարի ես. դու ամեն
« տեղ ես և ամենքին օգնում ես. ինչպէս օգնե-
« ցիր Նագլուին և փրկեցիր Քրդերի ձեռքից,
« այնպէս էլ օգնիր մեզ և փրկիր այս գիշերա-
« յին խաւարի սարսափից և գազաններից և հա-
« դար ու մի փորձանքներից, որոնք կարող են
« մեզ պատահել. մեր նպատակը սուրբ է, մեր
« ճանապարհը բարի է. եղիր, ով Տէր, մեր օգ-
« նականը և փրկիչը։»



Խմբակի չորած տեղից մի երկու քայլ հեռու կար մի մեծ քարայր, ուր ճգնում էր մի ծերունի, որը լսելով սոցա աղօթքը, մտածում է թէ երևի անփորձ ճանապարհորդներ են, ուստի ձէթի պատրոյկը կպցնելով՝ ձայն է տալի. «շտապիր փրկուելու» այստեղ. ով գիշերային ճանապարհորդ։»

Առաջին նուագ՝ այս ձայնը ուրախացրեց խմբակին, բայց հետզհետէ կասկած ու երկիւղ զարթեցրեց նորա մէջ. նա սկսեց լռել և առանձին տեղ որոնել որ թաղնուի։

Այժմ մենք բոլորովին կորանք, վախենալով ու դողդողալով ասում էր Նազելին։

Սուս, սուս. մի խօսէք. մեր ձայնը չլսուի. դրքա աւազակներ են անպատճառ. զգուշացնում էր Գարդիթերը։

Ա՜խ մայր ջան, այս ինչ տեղն ենք ընկել, լալիս էր Սիրանուշը։

Ի՞նչ յիմարութիւն արինք, ով է այժմ մեր տէրը, հառաչում էր խմբակը. այս ասաց և սուս կացաւ. ահ ու դողի մէջ, իրար փաթաթուած, մի ծառի տակ խոտերի մէջ լուռ ու մունջ նստած, բոպէ առ բոպէ սպասում են փորձանքի. որը աւազակների կողմից, որը գազաններից, որն էլ ահից ու երկիւղից։

Սակայն երկար չտևեց նոցա երկիւղն ու

տարակուսանքը, որովհետև ճգնաւորը նկատելով թէ ոչ ոք չերևեց, հասկացաւ որ վախեցած ու կասկածած կլինին. ուստի միամտացնելու համար՝ կրկին ձայն տուեց. «եկէք ինձ մօտ, ո՛վ « անփորձ ճանապարհորդներ, ես Ծերունի ճրագ- « նաւորն եմ, այս քարայրը իմ բնակարանս է, « ես ձեզ կընդունեմ սիրով, վնաս չի հասնի « ձեզ, Աստուած է ձեզ ուղարկել ինձ մօտ»։

Խմբակը դարձեալ դողում է ու սարսափում, նա չի հաւատում թէ ճգնաւորը կարող է լինել այնտեղ. նա կարծում է հաստատ թէ այդ մի խաբեբայութիւն է. ուստի ձայն չի հանում, և լուռ ու մունջ նստած է տարակուսած և յուսահատուած աջ ու ձախ նայելով, երբ յանկարծ Սիրանոյշը «վա՛յ մէ...». գոռում է և քիչ է մնում սիրտը գնայ. իսկոյն մխիթարում են նորան. յուսադրում են և «ի՞նչ է, ի՞նչ է, Սիրանոյշ» հարցնում են ամեն կողմից. «տեսէ՛ք տեսէ՛ք», լեղապատառ ցոյց տալով դէպի ձորը, ուր երեք ճրագներ շարժւում են և բարձրանում են ձորափը, «քոյրիկներ, դոքա գայլեր են, ասում է Սրբուհին, գնանք փրկուենք, տեսէ՛ք դէպի մեզ են գալի»։ Այո՛, այո՛. գայլերի աչքերը գիշերը ճրագի փայլ են տալի. գնանք շտապենք այնտեղ, որտեղից քիչ առաջ ձայն էր գալի, խորհուրդ էր տալի Վարդիթերը, աւելի շուտ աւազակներից կարող



ենք փրկուել, որովհետև նորա խօսք կհասկանան, մեր լացին, արտասուքին կխնայեն. քան թէ այդ գայլերից. գնանք, գնանք. ահա՛ մօտենում են։

Խմբակը շտապով վեր է կենում և դէպի քարայրն է գնում. և ահա՛ քարայրի դրանը Ծերունի ճգնաւորի առաջին չորած խնդրում է խնայել իւր կեանքին։

«Վեր կացէք. որդիքս, վեր կացէք». խօսեց « Ծերունին». այժմ դուք փրկուած էք. հանգիստ « եղէք»։

Թէպէտ խմբակը ապահովուեց, որ աւազակները չկային, ինչպէս ինքն էր կարծում, բայց ճգնաւորի զառամեալ ծերութիւնը բոլորովին փոխել էր նորա կերպարանքի կանոնաւոր գծագրութիւնը և խմբակը վախենում էր նայել նորա վերայ. ճգնաւորի սպիտակ մազերը ծածկում էին նորա մէջքը, իսկ մօրուսը փռուած էր մինչև ծնկները, կրկնածալ սպիտակ յօնքերը գրէթէ բոլորովին փակել էին աչքերը և ականջների մէջ բուսել էին երկայն սպիտակ մազեր. երեսն ու ձեռքերն ամբողջապէս մազով էին ծածկուած, իսկ եղունգների երկայնութիւնը գրէթէ մատների երկայնութեանն էր հասնում. խօսում էր շատ ծանր և անուշ էր նորա ձայնը։

Սա կամ մազից շինած մարդ է և կամ մի

ոգի, որ մեզ երևում է, մտածում էր նոցանից ամեն մէկը իւր մտքում։

Հետզհետէ ընտելանում է խմբակը նորա կերպարանքին, մանաւանդ որ շատ էլ սիրում է նորան, բարի և օգտակար խորհուրդների համար։

«Բարի էք եկել, աղջիկներս. Աստուած օրհնի ձեր ճանապարհը». խմբակի վերայ երկար նայելուց յետոյ խօսեց Ծերունին։

Շնորհակալ ենք նախ Աստուծուց, որ մեզ փրկեց, և յետոյ Ձեզանից, ով բարի հայր, որ ընդունելով Ձեր քարայրը, ազատեցիք խաւար գիշերի սարսափից և գազանների սպառնացող վտանգից, ասաց Նազելին համբուրելով Ծերունու ձեռքը։

*Ծերունի Ճգնաւորը.* «Ես այդ իսկ նպատակի համար եմ ապրում և այստեղ բնակւում, որ պէտք գամ ձեզ նման անփորձ ճանապարհորդներին. բայց այդ դեռ թողնենք, գիշեր շատ է անցել և ձեզ հարկաւոր է հանգստութիւն. գնացէք այն անկիւնը և քնեցէք. իսկ ես իմ աղօթքս կանեմ»։

Բարի հայր, ասում է Նուարդը համբուրելով Ծերունու ձեռքը, մենք մերժել ենք մեզանից ամենայն հանգստութիւն մինչև այն ժամանակ, երբ մեր բարի Արարիչը կհասցնէ մեզ մեր նպատակին։

Այո, կրկնում է Նարգէսը, եթէ հանգստու-



թիւն էինք կամեցել, այստեղ չէինք լինի, այլ մեր տների մէջ, մեր ծնողների գրկում։

Այս չարչարանքն ահա, աւելացնում է Նազելին, յոյս ունինք Աստուածանից, կտայ մեզ ապագայում ցանկալի հանգստութիւնը։

Որովհետև ամենայն չարչարանքի և աշխատանքի պտուղը հանգստութիւնն է, վերջացնում է Նազիկը։

«Այո աղջիկներս, այո». ասում է անվրդով և հանդարտ կերպով, մխիթարուած Ծերունին «բայց ձեզ հարկաւոր է հանգստութիւն. բարի գիշեր. հանգստացէք խաղաղութեամբ»։

Բոլորն էլ մէկ մէկ՝ յարգանօք և ակնածութեամբ համբուրեցին Ծերունու ձեռքն և կանգնեցին առաջին. Ծերունին խաչակնքեց նոցա և նոքա գնացին ընելու քարայրի մի անկիւնը, ուր ցոյց տուաւ նոցա Ճգնաւորը։

Ծերունին քարայրի դուռը փակում է և իւր աղօթքն է անում. և ստէպ ստէպ յետ դառնալով նայում է խոր քնի մէջ ընկղմուած յոգնած խմբակի վերայ և ասում է. «փառք քեզ Աստուած, « աշխատանքից ու չարչարանքից յետոյ ինչպէս « քաղցը է քնոյ հանգստութիւնը»։

Բաւական գիշեր էր անցել. և ահա բնութիւնը մերկանում է իւր խաւար ծածկոցը, գիշերային խոր լռութեանը փոխարինում են ցե-

բեկուայ ձայն ու աղաղակները, մեռելութեանը՝ կենդանութիւնն ու գործը։ Ահա արևելքը բացուեցաւ և արշալոյսը ցրւում է խաւարը. արեգական առաջին ճառագայթները շող են արձակում լեռների գագաթները, այնտեղից էլ իջնում են ծառերի կատարները և վերջապէս քարայրի մէջ ևս ճառագայթելով՝ բարի առաւօտ են աւետում ճանապարհորդ աղջիկ խմբակին։ Բնութիւնը կենդանանում է. որովհետև բնութեան թագաւորը իւր թախտի վերայ նստած է և ամենից գործ ու աշխատանք է պահանջում, միայն յոգնած, դադրած, գիշերային խաւարից ահաբեկուած աղջիկ խմբակն է, որ դեռ ևս քնած է. բոլորովին վստահացած իւր բարի ծերունի հօր հոգատարութեանն ու խնամքին։ Ծերունին ևս իւր կողմից խղճալով այդ խմբակին՝ չէ զարթեցնում. թոյլ է տալիս որ նա հանգստանայ տակաւին. որովհետև ուշ քնեց, դեռ չէ կազդուրուած. և նայելով խմբակի վերայ՝ մխիթարւում է շատ, որ վստահ հարազատութեամբ իւր քարայրի մէջ, իւր հովանաւորութեան տակ, կարծես իւր խնամոցն է յանձնուած, իրանով է փրկուած. «փառք քեզ Աստուած, որ ինձ իմ նպատակին հասցրիր, միշտ ողորմած պահիր իմ սիրտս և իմ գիրկս բաց, արձակ. ուր թող ապաւինեն իմ սանիկները»։ այս խօսքերը ասելով՝ խաչակնքում է նո-



ցա վերայ և քարայի դուռը բացանելով, շոքում է դրան առաջ և աղօթք է անում Աստուծուն։

Որովհետև Վարդիթերը երեսով դէպի քարայրի դուռն էր պարկած, ուստի արեգական շողը ծակծկում է նորա աչքերը, նա վեր է կենում և զարթեցնում է միւսներին, ասելով. «վերկացէք քոյրիկներ, ահա լուսացել է»։

Այս ձայնի վերայ զարթնում են բոլորը, ուրախ սրտով, բաւական հոգւով, Աստուծուն փառք տալով դիմում են դէպի ծերունին բարի առաւօտ մաղթելու. բայց նա ցոյց է տալի նոցա մօտակայ աղբիւրը. խմբակը գնում է դէպի աղբիւրը լուացուելու. ահա նա յստակ ու վճիտ աղբիւրի մօտ, որ ծածկուած է սաղարթախիտ ծառուկներով, լուացւում է աղբիւրի պաղ ջրով, խմում է նոյն աղբիւրի սառը ջուրը և նստում է փոքր ինչ այդ գեղեցիկ աղբիւրի առաջ, ծառուկների շուքում։

*Սիրանոյշ*. Սարսափելի երազ տեսայ այս գիշեր, թէպէտ վերջը ուրախալի էր։

Պատմիր լսենք, սիրելի, ասում են հետաքրքրաբար ընկերուհիները. գուցէ թէ մի ճանապարհ ցոյց տայ մեզ այդ երազը։

*Նազիկ* Իմ մեծ մայրս ասում էր շատ անգամ, թէ մէջ գիշերին տեսած երազը, որ ասւում է տեսիլ, ունի իւր նշանակութիւնը, նա նախազ-

գուշութիւն է տեսնողի՝ կամ ում համար էլ որ նա տեսել է։

*Սրբուհի.* Շատերն էլ ասում են թէ սուտ է. այլ ինչ տպաւորութեան տակ որ մարդ քընում է, այն է տեսնում։

*Նուարդ.* Ինչ և իցէ. պատմիր սիրելի, ուշանում ենք մեր բարի ծերունի հօր մօտ։

*Սիրանոյշ.* Ես տեսայ, որպէս թէ շատ շարշարանքից ու նեղութիւնից յետոյ հասել էինք մի մեծ ծովի ափը, ուր շուարած կանգնած էինք ահ ու դողի և սարսափի մէջ. մեր աջ ու ձախ կողմերում երևում էին դէպի երկինք բարձրացած քարաժայռեր, որոնց վերայ չէր երևում ոչ մի խոտ, ոչ մի ծառ, ոչ մի թուփ. քարաժայռերի գագաթներին կայծակներ էին խփում, որոտումն էր լինում և շանթերի ու ճայթիւնների ձայներ էին լսւում. մենք դողում էինք և չգիտէինք թէ ինչ է սպասում մեզ, առաջներիս ծովն էր, որի յուզուած ալիքների վերայ մենք պետք է գնայինք, իբր թէ այդպէս էր պատուիրած մեզ. երբ յուսահատուած կամենում էինք յետ շրջուել որ վերադառնանք, ինչ ենք տեսնում—ետևներիցս ահագին գոռում գոչումով արշաւելով յարձակւում էին մեզ վերայ անթիւ անհամար սևազգեստ մարդիկ, որոնց առաջից ընթանում էր նոցա դրօշակիրը. սև դրօշակի



վերայ գրուած էր ՏԳԻՏՈՒԹԻՒՆ. և դրօշակիրը անդադար գոռում էր «բռնեցէք դրանց, ծովը « ձգեցէք այդ ապազայ լուսաւորութեան մայրե- « ին, ինչպէս ձգել էք շատերին, ծովի ան- « դունդն է դոցա արժանաւոր գերեզմանը, հա- « սէք որդիք խաւարի, հասէք. վտանգաւոր է մեզ « համար այդ ապազայ լուսաւորութեան մայրերի « յաջողութիւնը». այս խօսքերն ասելիս նոցա բերանից դուրս էր գալի սև ու թանձր ծուխ, և ամեն մի խօսքն արտասանելիս՝ կարծէք թէ որոտումն էր լինում, որի արձագանքը կրկնում էին քարաժայռերի անձաւները. այս որ տեսանք ու լսեցինք, էլ չգիտէինք թէ ինչ անենք. անկարագրելի էր մեր սարսափն ու երկիւղը, դողում էինք ամբողջ մարմնով. և երբ կէս ուշաթափ դրութեամբ հազիւ կարողացանք ասել թէ «Տէր Աստուած, դու եղիր մեր փրկիչը». և ահա այդ քարաժայռերը խորտակուեցան և ահագին քարեր պոկւում էին քարաժայռերից և ցրիւ էին գալիս կարկուտի նման դէպի մեզ արշաւող տգիտութեան բանակի վերայ, թէ ինչ եղաւ նոցա հետ, էլ չտեսայ, որովհետև քարաժայռերը որ խորտակուեցան՝ իսկոյն այնտեղից մի կին օդի մէջ սրանալով, թռաւ ու հասաւ ծովի միւս ափը, այնտեղ լուսոյ մէջ նստած, ձախ ձեռքով մի տախտակ էր բռնել՝ որի վերայ գրուած էր

ՓՐԿՈՒԹԻՒՆ, իսկ աջ ձեռքով բռնել էր մի գրիչ և թղթի վերայ գրում էր ՈՒՍՈՒՄ. նորա լուսաւոր ճակատի վերայ գրուած էր Բաբի Մայր Մարիամ։ Երբ տարակուսանքի ու երկիւղի մէջ նայում էինք նորա վերայ, յանկարծ ձախ ձեռքը երկարացրեց դէպի մեզ, և այն տախտակը՝ որը այնպէս փոքր էր երևում առաջ, այժմ մի մեծ նաւի պէս ջրի վերայ մեր առջևը կանգնած տեսանք և լուսաւոր կինն էլ այսպէս էր խօսում. «Նստեցէք այդ նաւի մէջ ապահով և աներկիւղ, անցէք այս ափը, հասէք իմ գիրկը՝ որը բաց է ձեզ համար, անմեղ աղջիկներ, թշուառ որբուկներ. գիտեմ ինչ է ձեր ցանկացածը, ես կտամ ձեզ այն. դուք կլինէք իմ ուսման բարի որդիք և ես ձեր ուսման բարի մայր». այս ասելն ու մեզ իւր գրկի մէջ սեղմելն մէկ եղաւ, և ես զարթեցայ։ Թէ ինչ պիտի լինի այս երազը, չգիտեմ։

Ի՜նչ լաւ երազ էր. գրեթէ գտնուած է ուրեմն մեր բարի մայրը, ասում էր ամեն մէկը նոցանից։

*Վարդենը.* Դա շատ պարզ երազ է և շատ կարելի է որ մեր բարի մայրը հէնց այդպէս էլ կգտնենք, ո՞վ գի՛տէ, Աստուած ի բարին կատարէ քո երազը, Սիրանուշ։

Ամէն, ամէն. ասում էր ու կրկնում ուրախացած խմբակը։



*Նուարդ.* Ա՜խ Աստուած, կատարի՞ր այս երազը. պարգևի՞ր մեզ Բարի Մայր Մարիամը։

*Նազելի.* Եւ հասցրու մեզ մեր բարի նպատակին։

*Արուսեակ.* Որ պէտք գանք մեր ծնողներին և մեր ազգին։

*Սրբուհի.* Բայց ի՞նչ պէտք է լինին արդեօք այն քարաժայռերը, այն որոտումն ու կայծակները, մեզ վերայ յարձակուող բազմութիւնը, ծովը և այլն։

*Վարդենը.* Դա ևս պարզ է. դոքա են մեր մինչև այժմ կրած և այսուհետև կրելու չարչարանքներն ու նեղութիւնները, մի՞թէ քարաժայռ ու կայծակ չէր մեր երեկուայ ճանապարհորդութիւնը, մի՞թէ ծովն ու բանակը չէր մեր ահն ու սարսափը գիշերուայ խաւարի մէջ։

*Սաթենիկ.* Բայց այս ծերունին ո՞վ է արդեօք. շատ անհասկանալի է, միայն շատ բարի է. եթէ դա չլինէր, արդեօք կենդանի կլինէ՞ինք մենք մինչև այժմ, թէ պատառոտուած գայլերից։

*Նազելի.* Ես կարծում եմ որ այդ ծերունին էլ նման է այն լուսաւոր կնոջը, որը ինչպէս մեզ միւս ափը հանեց, գրկեց ու ազատեց տգիտութեան խաւար բանակից, այնպէս էլ այս սպիտակահեր լուսաւոր ծերունին ձայն տուեց, կանչեց

իւր քարայրը և ազատեց մեզ գիշերային խաւարից և սարսափից ու վտանգից։

*Սրբուհի.* Ես կարծում եմ դա ուրիշ խորհուրդ ունի, որը մենք այժմ չենք հասկանում, բայց երբ կմեծանանք, ուսում կառնենք, այնժամանակ մեր խելքը շատ բանի կհասնի և մենք կը հասկանանք։

*Նարգէս.* Ինչ և իցէ, փառք Աստուծոյ, որ այսպիսի միջոցներով օգնում է մարդկանց. այո, սիրելի քոյրիկներ, Աստուած բարի է միշտ և ամենքի համար, մանաւանդ մեզ պէս խեղճերի համար. շնորհակալ ենք քեզանից, ով բարի Աստուած։ Շատ ուշացանք, սիրելի քոյրեր, չգնանք քարայրը. ինչ կմտածէ այժմ մեր բարի ծերունի հայրը։

Խմբակը վերկենալով տեղից՝ եկաւ քարայրը, համբուրեց բարի ծերունու ձեռքը, մաղթեց նորան բարի լոյս. փոխադարձաբար և ծերունին խաչակնքեց նորան և օրհնեց, որից յետոյ սկսաւ իւր հարց ու փորձը այսպէս. «Ես տեսնում եմ որ դուք մի նպատակ ունիք և շատ մեծ պիտի լինի այդ նպատակը, որի համար յանձն էք առել մի այսպիսի ճանապարհորդութիւն. միայնակ, առանց առաջնորդի, առանց պաշտպանի, թողել էք տուն, տեղ, ծնող և ազգական, և ընկել էք սարերն ու ձորեր այսպիսի վատ ու պըղ-



տոր ժամանակում, երբ ձեր ամեն մի քայլը վտանգի մէջ է. ես ձեզ սիրում եմ, տեսնելով ձեր մէջ Աստուածպաշտութեան փափագ, աղօթքի սէր, երախտագիտութեան զգացմունք. բայց զարմանում եմ այս անսովոր դէպքի վերայ, որ ահա տեսնում եմ. ինչ է արդեօք ձեր նպատակը, որդիք։

*Վարդիթեր.* Մեր նպատակն է գտնել մի բարի մայր, որ մեզ որդեգրի և մեզ ուսում տայ, որպէս զի մենք էլ օգուտ տանք մեր ծնողներին. որոնց յոյսը մեզ վերայ է. մեր ծնողները չունեն այնքան միջոց, որ մեր ցանկացածք կատարեն. իսկ մեր ցանկացածը այնքան օգտակար է, որ ընդհանուր պահանջ է դարձել, դա է ուսումը, որը ձեռք բերելու համար, ինչպէս լսել ենք, շատերը տարիներով են թափառում օտար աշխարհներում, հեռու հայրենիքից, հեռու ծնողական տանից ու գրկից. այո ուսումն է մեր ցանկացածն ու որոնածը, ով բարի հայր, որը մեզ տալիս է հաց և կրթութիւն. ինչ կայ արդեօք աշխարհումս ուսումից քաղցր և օգտակար բան, նորանով մենք աւելի ենք ճանաչում և սիրում մեր Արարչին, որովհետև սովորում ենք նորա մեզ արած բոլոր բարերարութիւնները. նորանով մենք աւելի ենք սիրում և յարգում մեր ծնողներին, որովհետև կարողանում ենք գնահա-

տել նոցա անթիւ աշխատանքը, որ ունեցել են մեզ վերայ. վերջապէս նորանով մենք աւելի լաւ ենք ճանաչում մեր պարտքը—թէ ինչ պարտաւորթիւն ունենք մենք դէպի մեր Ստուածը, մեր ծնողները, մեր ազգն ու եկեղեցին. ահա այդ փրկարար ուսման համար ենք թափառում, որ գտնենք մի բարի մայր, որի սիրոյ և խնամքի հովանաւորութեան տակ միայն կարող ենք ստանալ այդ ուսումը։

*Ծերունի Ճգնաւորը.* Բայց դուք փոքրահասակ էք տակաւին և ինչպէս է, որ կարողացել էք հասկանալ ուսման օգուտը։

*Նազելի.* Իրաւ է Վարդիթեր, մեր բարի հայրը իրաւունք ունի զարմանալու մեզ վերայ՝ թէ մենք ինչպէս ենք հասկացել ուսման օգուտը, որի համար իսկ յանձն ենք առել այսպիսի մի ճանապարհորդութիւն, բայց մի զարմանաք, բարի հայր, մանուկը որ այժմ դառնում է չորս, հինգ տարեկան, արդէն նորա աչքերը ուսումնարանի ճանապարհն են որոնում, նա տեսնում է իւր դրացիների որդուցը թէ ինչպէս նորա ուսումնարանից գալիս են գրքերը ձեռքին, ուսումնարանի համեստ հագուստով. թէ ինչպէս նորա լաւ գրում են, լաւ կարդում են, նկարում են, կարում են, վերջապէս թէ ինչպէս նորա փոդ են աշխատում իրանց էլ են պահում, իրանց ծնողներին էլ. ահա այս բաները և մենք տեսնելով և շատերից լսելով, հաւատացել ենք որ ուսումը օգտակար է, բայց որովհետև մեր ծնողները մեր ուսման բոլոր հոգսերը հոգալու համար չունին այնքան միջոց, ուստի մենք յաձն ենք առել տանջուել ու չարչարուել մինչև կը գտնենք մեզ համար մի բարի մայր։



Ծերունին զարմանում է սոցա հարտար խօսքերի վերայ և շուտ շուտ համբիչը ձեռքին, աչքերը դէպի երկինք բարձրացնելով «փառք քեզ Ստուած.» ասում է ու կրկնում։

*Ծերունի Ճգնաւորը.* Ուրեմն դուք բարի մայր էք որոնում, որի խնամքով ձեռք պիտի բերէք ձեր ցանկացած ուսումը, բայց դուք ձեր ծնողների կամքով էք ճանապարհորդում։

*Նարգէս.* Առանց մեր ծնողների կամքի, ով բարի հայր. մենք մի քայլ անդամ չենք կարող փոխել։

*Նուարդ.* Աշխարհիս երեսին Ստուծուց յետոյ, էլ ինչ ունենք մեր սրտին մօտիկ՝ մեր հոգուն հարազատ՝ քան եթէ մեր սիրելի ու պաշտելի ծնողները։

*Վարդանուշ.* Նոցա սէրը չէ արդեօք, նոցա կեանքի ապահովութեան խնդիրը չէ արդեօք. ով բարի հայր, որ ձգել է մեզ սարէ սար ու քարէ քար, որ ուսման միջոցով օգնենք նոցա։

*Նազելի.* Կարծում էք, բարի հայր, թէ մեր սիրտն ու հոգին չեն քաղցում մեր սիրելի ծնողների համար. ա՜խ, եթէ նոքա ապահով վիճակ ունենային. եթէ մենք հաւատացած չլինէինք թէ ուսումը օգտակար է, ինչո՞ւ կհեռանայինք ծընողական քաղցը զրկից. ա՜խ, որքան քաղցը է որդւոց համար ծնողական գիրկը. այո՛, այն զըրկից մենք այժմ հեռու ենք, մենք որբ ենք այժմ, մենք անպաշտան ենք. գնում ենք, և չգիտենք մինչև երբ և կամ ո՞ւր. օրհնեցէք մեզ, բարի հայր, որ Աստուած շուտով հասցնի մեզ մեր բարի և օգտակար նպատակին։

*Ծերունի Ճգնաւորը.* Աստուած ինքը թող օրհնէ ձեզ, որդիք. Նա ինքը թող լինի ձեր հայրն ու պաշտպանը, շատ ուրախ եմ. դուք ինձ շատ մխիթարեցիք. յոյս ունիմ, որ Աստուած էլ ձեզ կմխիթարէ։ Հապա տեսնեմ որդիքս, կարող էք այս մի տարակոյս էլ փարատել. դուք փոքրահասակ էք և անփորձ, իսկ ձեր ծնողները հասակաւոր են, նոքա փորձուած են, շատ չար ու բարի տեսած կան. ինչպէս է որ համաձայնուել են ձեզ առանց մի պաշտպանի թողնելով՝ ձեր կեանքը վտանգի մէջ դնել։

*Սրբուհի.* Ճշմարիտ է բարի հայր, որ մեր ծնողները միայնակ չպիտի թողնէին մեզ, ո՞վ գիտէ ինչ փորձանք կարող է պատահել մեզ, քա-



նի որ մեր ամեն մի քայլը վտանգի մէջ է. բայց ճշմարիտ է և այն՝ որ խեղճութիւնն ու անապահով կեանքը մեզ պէս շատ շատերին է ձգել այս թշուառ ճակատագրի տակ. նոյն խեղճութիւնն է դառնում պաշտպան ու առաջնորդ խեղճին՝ խղճալի դրութիւնից հանելու և ազատելու.

*Սաթենիկ.* Եթէ աւելացնենք դորա վերայ և ուսման այն քաղցն ու ծարաւը, որ այժմ մենք ունինք. ինչպէս քաղցածն ու ծարաւը՝ մի կտոր հացի և մի կում ջրի համար յաձն է առնում ամեն նեղութիւն ու տառապանք, որ իւր կեանքը ազատէ սովի վտանգից, այնպէս էլ մենք յանձն ենք առել այսպիսի մի անպաշտպան ճանապարհորդութիւն, միայն փրկարար ուսման համար.

*Արուսեակ.* Բայց մենք լսել ենք, ո՞վ բարի հայր, որ մեր Մեծ Բարի Հայրը՝ Աստուած ամեն տեղ է, ամեն բան տեսնում է, ամենքին օգնում է և փրկում է զանազան փորձանքներից, մանաւանդ նոցա՝ որոնք Իրեն սիրում են և աղօթում, պահելով Իւր պատուիրանները. մենք լսել ենք և հաւատում ենք, որ առանց այդ մեր Ամենաբարի Հօր կամքի ոչինչ չի լինի և ոչինչ չի պատահի. իսկ եթէ նորա սուրբ կամքն է, որ փորձանքը գայ, այն ժամանակ ո՞չ մեր ծնողները կարող են մեզ փրկել, ո՞չ տունը և ո՞չ ամենաքաջ պաշտպանը. այս է պատճառը, որ երբ վերջին անգամ օրհնում

էին մեզ մեր ծնողները որ ճանապարհ ձգեն՝ ասացին մեզ «Գնացէք որդիք, լոյս որոնեցէք՝ որ խաւարը լուսաւորէք. հաց որոնեցէք՝ որ ձեզ և մեզ պահէք։ Աստուծոյ հրեշտակը կլինի ձեր ճանապարհի ընկերը, ինչպէս Ռափայէլ հրեշտակը Ազարիա անունով և մարդոյ կերպարանքով ճանապարհի ընկեր եղաւ բարեպաշտ Տովբիթի Տուբիա որդուն. ուրեմն դուք միայնակ չէք, ունիք ձեր ամենահզօր պաշտպանն ու առաջնորդը, գնացէք բարեաւ, ձեզ բարի ճանապարհ. թող Աստուած օրհնէ ձեր նպատակը և մեզ արժանացնէ ձեզ դարձեալ գրկել, տեսնելով ձեր մի ձեռքին լոյս և միւս ձեռքին հաց, Աստուած ձեզ հետ»։ Ահա մեր ծնողների վերջին խօսքը՝ որով իրաւունք տուին մեզ ճանապարհորդելու, միայն Աստուծոյ վերայ դնելով մեր յոյսը։

*Ծերունի Ճգնաւորը.* Այո՛ որդիք, Աստուած՝ իբրև ամենաբարի հայր, սիրում է մեզ՝ իբրև իւր որդիք. նա մեզ խնամում է, պահպանում է և ազատում է թէ չարից և թէ փորձանքից, ոչինչ չէ լինում առանց նորա կամքի, բայց աւելորդ չէր ձեզ մի պաշտպան։

*Վարդիթեր.* Ի հարկէ ամենայն մարդ կարօտութիւն ունի մի ընկերի, մի պաշտպանի, բայց մենք հաւատում ենք, ով բարի հայր, որ Աստուած է մեր ամենամեծ պաշտպանը և նորա



բարի հրեշտակն է մեր ամենամտերիմ ընկերը. իրաւ է, նա չէ երևում մեզ, նա չէ խօսում մեզ հետ, նա չէ բռնում մեր ձեռքը և ազատում փորձանքից, բայց նա այդ ամենը անում է մեզ նման մարդկանց ձեռքով, նա երևում է մեզ մարդկանց մէջ. նա խօսում է մեզ հետ մարդկանց միջոցով. նա բռնում է մեր ձեռքը և ազատում է փորձանքից դարձեալ մարդկերանցով, ինչպէս Ձեզանով ազատեց մեզ գիշերային խաւարի սարսափից և գազանների մեզ սպառնացող վտանգից։ Ձեր մէջ նա երևում է մեզ այժմ և Ձեզանով խօսում է մեզ հետ և խրատում է մեզ, ուրեմն ամեն ժամանակ և ամեն բանով գրէթէ մեզ խնամում է Աստուած, մեր Ստեղծողը, մեր ամենաբարի հայրը։

*Ծերունի Ճգնաւոր.* Դու ուսել ես մի տեղ, թէ քեզանից ես ասում այդ, որովհետև ճշմարիտ են քո խօսքերը և զարմանքիս հետ մեծ բաւականութիւն և միխիթարութիւն են պատճառում ինձ։

*Վարդիթեր.* Ես չեմ ուսել ոչ մի տեղ. բարի հայը, բայց իմ հայրս, որ միշտ սուրբ գիրք է կարդում, երեկոյեանները հաւաքում է իւր շուրջը ինձ, եղբայրներիս ու քոյրերիս և պատմում է մեզ Աստուծոյ արած մեծամեծ գործերը, ահա թէ որտեղից գիտեմ ես այս ամենը։

*Ծերունի Ճգնաւոր.* Շատ ուրախ եմ, որ-

դիք, որ դուք այսպէս մեծ հաւատ և սէր ունիք ձեր Արարչի, ձեր Ստուծոյ վերայ. այո՛ մարդուս սկիզբն էլ է Ստուած, վերջն էլ է Ստուած. մարդս Ստուծով է ապրում, առանց Ստուծոյ ոչինչ չէ եղած և ոչինչ էլ չի լինի։

*Վարդիթեր.* Այժմ մեր խմբակի խնդիրն այս է Ձեզ, ո՛վ բարի հայր, որ մի խորհուրդ տաք մեզ թէ ինչպէս գնանք և կամ ո՞ւր, որ կարողանանք գտնել որպէս մեզ համար, նոյնպէս և մեզ նման շատ խեղճ աղջիկների համար ուսման բարի մայրը, որի խնամքով, որի հոգատարութեամբ կարողանանք ձեռք բերել այն ուսումը, որը ամենին է ցանկալի և ամենի համար օգտակար։

*Ծերունի Ճգնաւոր.* Որովհետև ես ձեզ սիրեցի, տեսնելով ձեր մէջ սէր և հաւատ դէպի ձեր Ստեղծող Ստուածը և երախտագիտական զգացմունք դէպի բարերարներն առ հասարակ, ուստի օրհնում եմ ձեզ որդիք՝ Ստուծոյ օրհնութիւնով. և ահա կպատմեմ ձեզ մի պատմութիւն երկու բարեպաշտ կենակիցների, որոնք ձեզ պէս աղջկերանց համար էին մտածում միշտ։

Այս ձեր բնակուած Տ.... քաղաքից շատ հեռու դէպի հիւսիս, կայ մէկ մեծ քաղաք Մ... անունով։ Այդ քաղաքում կենում էին երկու բարեպաշտ ամուսիններ Յովիկ և Մարիկ անուններով, ունէին նորա որդիք և նոցա կեանքն էր անկարօտ և վայելուչ։ Գեղեցիկ և պայծառ գարնանային մի երեկոյ, երկու բարեպաշտ ամուսինները նստած էին իրենց պատշգամբի վերայ և նայելով իրենց ծառերով ու ծաղկունքներով զարդարուած պարտիզի վերայ՝ խօսում էին այսպէս։



Յովիկ սիրելի, ասում է Մարիկը՝ ինչքան թշուառներ, որբուկներ տեսայ Տ... քաղաքում, աղիքներս դալարեցան, արտասուքս չէ ցամաքել, ինչ խեղճութիւն, ինչ թշուառութիւն։

*Յովիկ.* Մարիկ իմ սիրելի. կարծում ես թէ ինձ յայտնի չէ՞ և կամ չեմ մտածել նոցա համար. յիշում ես, քանի տարիներ սրանից առաջ երբ ես քեզ պատմում էի, դու զարմանում էիր, թէ միթէ այդքան խեղճութիւն կայ Տ.... քաղաքի Հայ ընտանիքների մէջ. իսկ ես քեզ ասացի, այո՛ այո՛ կայ և խիստ շատ են այդպիսի ընտանիքները. բայց մենք չենք տեսնում և դժուար է տեսնել, որովհետև մենք մեր անկարօտ կեանքի բարձրութիւնից չենք կարողանում մի քանի աստիճան ցած իջնել և մտնել կարօտեալների և թշուառների կեանքը. ինչպէս բարձր սարերը բարձրերն են տեսնում, իրանց ստորոտը նայել չեն կարողանում։

*Մարիկ.* Ա՜խ Յովիկ, մտայ ես նոցա խուղերը, տեսայ ես նոցա նիստ ու կացը, խեղճութիւն, տգիտութիւն. հացի անունը չգիտեն հայերէն, ուսումից դուրկ են բոլորովին. մայրերից անէծք ու հայհոյութիւն, հայրերից ծեծ ու կռիւ էի տեսնում ու լսում խեղճ զաւակներին. քննեցի և տեսայ որ ուսում չունենալուցն է նոցա այն թշուառ կացութիւնը. մտածեցի խորհուրդ անել քեզ հետ, փրկութեան մի ճանապարհ գտնել այն անուսում թշուառների համար. եթէ դու ես ինձ հետ կը համաձայնես։

*Յովիկ.* Ի՞նչ կայ կեանքիս մէջ ինձ համար մի քաղցր բան քո բաղձանքդ կատարելուց աւելի. և այն այդպիսի մի սուրբ բաղձանք, որը մեր պարտքն է, մթթէ Աստուծոյ մեզ տուած բարութիւնը միայն մերն է, ոչ սիրելի, նորա մէջ է և խեղճերի փայը, նոցա մասը, ես այն ժամանակ միայն իսկ երջանիկ կհամարեմ մեր ամուսնական կեանքը, երբ մեր կարողութիւնից մասն կհանենք և տառապեալներին. երբ կտեսնենք որ մեր վաստակով ապրում են աշխարհիս երեսին և մի քանի անբաղդներ ու որբուկներ։

*Մարիկ.* Ճիշտ են բոլոր ասածներդ. մանաւանդ եթէ դորա վերայ աւելացնենք և այն, որ մարդս՝ հարուստ լինի թէ խեղճ, դարձեալ պարտական է մի կերպով օգնել իրեն ձեռք մեկ-



նողին, որը փողով, որը օգտակար խորհուրդներով. ուրեմն եթէ աղքատն էլ իւր կարողութեան չափ պարտական է օգնել իրանից խեղճին, ա առաւել ուրեմն հարուստն ու անկարօտը. մենք, փառք Աստուծոյ, ունենք Աստուծուց պարգևած այնքան բարիք, որից եթէ մասն չհանենք կարօտեալներին, յանցանք է մեզ համար անքաւելի, մեր կեանքի քաղցրութիւնն էլ հէնց նորանումն է, որ տեսնենք մեր վաստակով ապրողներին, մեր երախտեաց զաւակներին, մեր տընկած, մեծացրած պտղաւէտ ծառերին։

*Յովիկ.* Այո՛, այո՛, հէնց քաղցրութիւնն էլ դորա մէջն է, յիշում եմ և քանի անգամ էլ քեզ ասել եմ թէ ինչպիսի տպաւորութիւն էին անում ինձ վերայ աշակերտութեանս ժամանակ իմ բարոյախօս Ալ...բեան ուսուցչի դասախօսութիւնները. երբ նա Աստուծոյ բարութեան վերայ, մեր պարտականութեան և ողորմութեան մասին ջերմ զգացմունքով և սաստիկ ոգևորուած խօսում էր, ես իմ փոքր տեղովս, թէպէս ոչինչ չունէի, հագիս ուսումնարանական շապիկն անգամ ուզում էի հանել և տալ աղքատներին ու կարօտեալներին. և երբ լաւ սովորելուս համար ինձ գիրք էին ընծայում, կարդում էի այն և վերջացնելուց յետոյ ծախում էի և նորա փողը աղքատներին էի բաժանում. ինչքան ուրախա-

նում էի երբ աղքատները ինձ օրհնում էին և յիշում եմ նոցա խօսքը որ ինձ ասում էին «Աստուած մուրացող տայ, աղուորիկ, հատ ձեռքով տուիր, ջուխտ ձեռքով Աստուծմէն առնուս». չեմ մոռացել նոցա այս օրհնութիւնը և այժմ փառք իրան Արարչին, իրաւ որ ջուխտ ձեռքով տուեց ինձ իւր բարիքը. մինթէ ես իմ պաշտելի Ալ...-բեան ուսուցչի բարոյական խոսքերը, որ իբրև սերմիկներ ցանեց իմ սրտի և հոգւոյ մէջ, պէտք չէ որ խղճմտանքով հսկեմ որ պտուղներ տան. այո՛ այո՛. ես պարտական եմ առաջ Աստուծուն և յետոյ իմ անմոռանալի երախտաւոր ուսուցչին։ Ուրեմն քո բաղձանքդ՝ որ իմ պարտքս է, կ'կատարեմ. նախ՝ որ աւելի ևս Աստուծոյ օրհնութեանը արժանանամ, երկրորդ՝ որ աւազակներից սպանուած իմ նահատակ ուսուցչի հոգին երկնքումը ուրախանայ և երրորդ՝ որ թշուառ որբերը բաղդաւորուեն, որ դու ուրախանաս։

*Մարիկ.* Ուրախ եմ շատ, մինչև այժմ էինք վեց, եօթ որդւոց ծնող. այսուհետև կլինենք հարիւրաւոր որբուկների բարերար ծնողներ, որոց սուրբ աղօթքը միշտ խնկուելով Աստուծոյ աթոռի առաջ, մենք երջանիկ կլինենք թէ այս աշխարհում և թէ այն լուսաւոր կեանքում։

Երկու բարեպաշտ ամուսինները գրէթէ վրճռեցին իրենց անելիքը։ Անցաւ մի քանի ժամանակ և ահա Մարիկը տկարութեան մահիճն է ընկնում. և չնայելով բժիշկների անդուլ աշխատանքներին, անխնայ ջանքերին, նորա առողջութիւնը այնուհետև չէ վերականգնում, երակի զարկն հետզհետէ կորչում է, մահուան դեղնութիւնը սկսում է պատել նորա կերպարանքը. անհետանում են նորա աչքերի կրակն ու աշխոյժը և նա զգալով իւր օրհասը, կանչում է մահուան անկողնի մօտ իւր անպայման սիրելի և հարազատ ամուսին ընկերը և հազիւ կարողանում է ասել այս մի քանի վերջին հրաժեշտի խօսքերը «մնաս բարեաւ իմ կեանքի հաւատարիմ ընկեր, իմ բարի ամուսին, մահը բաժանում է ինձ քեզանից, բայց երկինք դարձեալ կմիացնէ մեզ միմեանց հետ. իմ հոգին կենդանի է և մեր ապագայ սանիկների հետ պիտի լինի. հոգա՛ Յովիկ սիրելի, այդ մեր սանիկների ուսման և փրկութեան գործը, որ իմ ոսկերքս հանգիստ լինին իմ շիրմիս մէջ և հոգիս հրճուի մեր սանիկների սրտերում. ահա՛ տեսնում եմ հրեշտակս. ողջ կաց իմ անմոռանալի կենակից.» «Կուխտեմ Աստուծուն այս ըսպէից, ասում է վշտացած ամուսինը, և կխոստանամ քեզ, բարի ամուսին, շուտով, շատ շուտով կատարել քո պատուէրը. բայց ա՜խ. աչքերը փակւում են. վերջին շունչն է....» Յովիկը չկարողանալով այլ

ևս շարունակել, դրկում է վերջին անգամ իրա-
նից յաւիտեան բաժանուող կենակից ընկերը.
հմ նա սառն է, նա իւրը չէ այնուհետև, նա
գնաց իւր յաւիտենից կայանը.... ախ, ինչ
արտասուք սիրելի ամուսնու, ինչ հառաչք հա-
բաղատ որդւոց. բարի մայր Մարիկը անշունչ
է. նա չկայ, աւաղ... նա չկայ...։

Երեք օրից յետոյ մեծաշուք յուղարկաւո-
րութեամբ աւանդւում է սառն հողին բարի մայր
Մարիկի մարմինը։

Սգաւոր Յովիկը պատշաճաւոր սուգ պահե-
լուց յետոյ շտապում է իւր բարի ամուսնու
կտակը իրագործել. և ահա մի քանի ժամանա-
կից յետոյ Յովիկը Տ.... քաղաքում, կուսա-
կից յետոյ Յովիկը Տ.... քաղաքում, կուսա-
նոցի մայրապետի հետ տեսակցելուց յետոյ հիմ-
նարկում է իւր ամուսնու ապագայ սանիկների
ուսման պատսպարանը և կարևոր պատուէրներ
տալով վերադառնում է իւր քաղաքը։

Ահա որդիքս այն պատմութիւնը, որը ինձ
յայտնի է. ուրեմն ձեր ցանկացած բարի մայրը
արդէն կայ և դուք արդէն հասած էք ձեր նպա-
տակին։ Այժմ ձեզ մնում է վերադառնալ այնտեղ՝
որտեղից եկել էք. այնտեղ կայ մէկ կուսանոց.
կհարցնէք և կգտնէք. այն կուսանոցում կայ իշ-
խանական ցեղից սերուած մի բարի մայրապետ,
որը նոյնպէս աշխատում է ձեզ նման ուսման



ծարաւ խեղճ Հայ աղջիկների համար մի բարի
մայր գտնել, կպատմէք մայրապետին այն ամենը
ինչ որ տեսել էք ու լսել և ինչ որ էլ կտեսնէք
և կլսէք այսուհետև, այդ ամենից յետոյ նա
ձեզ ցոյց կտայ թէ ինչ պիտի անէք. չմոռանաք
և այս, որ մայրապետը մի Աստուածապաշտ և
կրօնասէր կին է. սիրում է համեստութիւն և
պարկեշտութիւն, ես ինչքան նկատեցի, համես-
տութիւնը զարդարում է ձեր ճակատը, նա է
ձեր պսակը. բայց դարձեալ զգոյշ կացէք, որ
չվնասուէք. ահա իմ խորհուրդս և խրատս։

*Վարդիթեր.* Շնորհակալ ենք Ձեր բարի խոր-
հրդից և խրատից. ապահով եղէք բարի հայր.
համեստութիւնն ու պարկեշտութիւնը այնպէս են
միացած մեզ հետ, ինչպէս միացած են հոգին ու
մարմինը, առանց համեստութեան մենք մեռած
ենք, գոյութիւն չունենք, ինչպէս և առանց հո-
գու մարմինը ոչինչ է։

*Նուարդ.* Հայ աղջիկը նորանով է պարծե-
նում միայն, որ նորա երեսը քօղաւորուած է,
նորա ձայնը ցածր է, նորա գլուխը քաշ ձգած
և այդ ամենը համեստութեան պտուղներն են։

*Վարդանուշ.* Ո՞վ և կամ ինչը կարող է
խլել Հայ աղջկանից համեստութիւնը, ով բարի
հայր, քանի այդ յատկութիւնը ժառանգական է,
նա ծնողական է, նա ազգային է, մեր պապե-

ըից մեզ իջած. ուրեմն արենական է և հարազատ ու հաստատուն։

Ծերունի ճգնաւորը բոլորովին զմայլուած սոցա այսպիսի խելացի խօսքերի վերայ, ձեռքերը բարձրացրեց երկինք և փառք տուեց Աստուծուն, որից յետոյ դառնալով դէպի խմբակը՝ օրհնեց նոցա և ասաց «այժմ ես ուրախ եմ, որովհետև տեսայ այն փրկութիւնը, որը յղանում է այժմ մանուկ սերունդների թոյլ և անզօր թևերի մէջ և կծնի ապագայ երիտասարդութեան ամրապնդուած բազուկների ու գրկի մէջ», յետոյ տանելով նոցա քարայրի հիւսիսակողմը, ցոյց տուաւ մի այլ խորշ, ուր էր մի գեղեցիկ մարմարեայ շիրիմ, որը շրջապատուած էր մշշտադալար տերևներ ունեցող ծառերով և ծառերի տակից էլ յստակ և ականակիտ առուակ էր հոսում, և ասաց «այս իմ գերեզմանս է, երբ դուք կհասնէք ձեր նպատակին, կգաք և իմ գերեզմանիս մօտ չորած ողորմի կասէք իմ հոգուն. իսկ այս տախտակը, որ իմ դամբանագրի տախտակն է, կդնէք իմ գերեզմանիս վերայ և կփռէք ծաղիկներ ու տերևներ, ինչպէս ահա տեսնում էք. այժմ գնացէք աղբիւրը, ջուր բերէք ինձ համար, սիրտս մի սառը ջուր է ուզում»։

Խմբակը տարակուսանքի մէջ հեռանում է քարայրից դէպի աղբիւրը. բայց աղբիւրը ցամաքած տեսնելով. զարմանում է և շտապում է վերադառնալ քարայրը յայտնելու ծերունուն այս անցքը, մտնում է քարայրը, ծերունին չկայ, մտնում է խորշը այնտեղ ևս չէ, որոնում է նորան քարայրի մէջը և քարայրի շուրջը չկայ, չկայ իւր բարի հայրը. իւր պաշտպանը. սարսափում է խմբակը, անհասկանալի է նորա համար այս ամենը. մի և նոյն ժամանակ խղճահարւում է նա թէ ինչու վերջին անգամ շնորհակալութիւն չարեց նորան. վերջապէս տխուր ու տրտում տարակուսած խմբակը մտնում է խորշը, շոքում է շիրիմի առաջ և արտասուքը աչքերին տալիս է իւր վերջին բարևը ասելով «բարեաւ մնաս, ով բարի հայր, ընդունեցիր մեզ քո քարայրը, ազատեցիր վտանգից, սիրեցիր իբրև քո որդիք, խորհուրդ տուիր մեզ և բարի խրատ. և այժմ չես երևում դու մեզ, բայց քո յիշատակը միշտ կենդանի կը մնայ մեր մէջ»։ Այս ասելուց յետոյ համբուրում է շիրիմը և մեծ տարակուսանքի մէջ հեռանում է խորշից, ոտքը դուրս է դնում քարայրից և մեկնում է դէպի քաղաք, որտեղից որ եկել էր։

Նա անցնում է աղբիւրի մօտով, յուսալով որ մի կաթիլ ջուր կգտնէ ծարաւը կտրելու. մօտենում է աղբիւրին, դարձեալ ջուր չկայ. «Տէր Աստուած, այս ինչ բան է. այսպէս շուտ ինչու պէտք է ցամաքէր աղբիւրը». մտածում է նա.

ծարաւը նեղում է նորան, աղբիւրի շորս կողմը շրջազայում է և ինչ է տեսնում, մի կախարդական չքեղ աւազան, մամարեայ քարերով շինուած, շուրջը ծառեր ու ծաղիկներ, իսկ ջրի վերայ ծերունի ճգնաւորի դամբանագրի տախտակը, որի վերայ նստած է մի լուսաւոր ոգի սպիտակ շորերով. խմբակը բոլորովին ապշած այս երևոյթով, խօսել անգամ չէ կարողանում, այլ անթարթ աչքով այդ ոգու վերայ է նայում և ինքն էլ չէ հասկանում թէ այս ինչ է տեսնում, այս ինչ է պատահում, նա չի հաւատում իւր դրուխթեանը, մանաւանդ երբ աւազանի տարածութիւնն էլ քանի գնում՝ ընդարձակւում է և ոգին հետզհետէ հառանում է խմբակից, նա մեծանում և կնոջ կերպարանք է ստանում։

«Ձլինի թէ քո տեսած երազը սորա վերայ է կատարւում», ասում է Սիրանուշին Նուարդը։ «Ի՞նչ լք խնդրում, ումն էք որոնում, անմեղ աղջիկներ». շատ հեռանալուց յետոյ ձայն տուեց ոգին. «ով ես դու բարի կին, խղճա մեզ, մի մնասիր. և մենք քեզ կասենք». պատասխանեց խմբակը. «իմ ով լինելս դուք գիտէք, շուտով կիմանաք և կճանաչէք և յետոյ բոլորովին կը հաւատաք. բայց դուք ո՞րտեղից և ո՞ւր»։ Վարդիթերը խմբակի կողմից պատմեց բոլոր իւրեանց գլխովն անցածը, որից յետոյ լսեց լուսաւոր կնոջից։ «Գնացէք քարայրը, մտէք ճգնաւորի ցոյց տուած խորշը, յետոյ դիմեցէք քաղաք որոնելու կուսանոցը». այս ասելուց յետոյ լուսաւոր կինը դարձեալ հեռանում էր հետզհետէ և աւազանն էլ ընդարձակւում էր։

Խմբակը թէև ծարաւ, բայց լուսաւոր կնոջ հրամանը կատարելու համար շտապեց դէպի քարայրը, նոյնն էր. մտաւ խորշը, տեսաւ շիրիմը, դարձեալ նոյնպէս էին բայց այժմ շիրիմը ծածկած էր մի թեթև ծածկոցով և գլխավերը դամբանագրի տախտակը դրուած. «Ոչինչ նոր բան չկայ, ասում է Սրբուհին, ինչո՞ւ մեզ այստեղ ուղարկեց»։

*Վարդանուշ.* Հապա՝ այս զերեզմանի ծածկոցը վերցնենք, մէջը տեսնենք։

Խմբակը Վարդանուշի խօսքով բացեց ծածկոցը և ահա՝ աւազանի վերայ նստող կինը, այժմ այստեղ է պարկած, ծածկեց շուտով զերեզմանը, չոքեց այնտեղ, տուեց իւր ողորմին ճգնաւորի հոգուն և շտապեց դէպի աւազանը այժմ ո՞չ աւազան կայ և ո՞չ ոգին, դարձեալ առաջուայ յստակ ու պաղ ջրով աղբիւրը, սարսափած է խմբակը. բայց ծարաւը շատ է նեղում. մի կուշտ ջուր խմելուց յետոյ հեռանում է աղբիւրից, ստէպ ստէպ յետ դառնալով և նայելով, թէ մի գուցէ ոգին դարձեալ երևայ իրեն։

*Նուարդ.* Տէր Աստուած, այս ինչեր ենք տեսնում մենք. երազի մէջ ենք կատարեալ։

*Նազիկ.* Եւ միթէ այսպիսի երազներով պիտի վերջանայ մեր ճանապարհորդութիւնը։

*Նարգէս.* Իրաւ որ երազ էր. դեռ այնպիսի մի ծերունի, որի նմանը ոչ թէ միայն չէինք տեսել այլ հեքաթներումն անգամ չէինք լսել. յետոյ ցամաքած աղբիւր, յետոյ ծերունին անեռևութացած, աւազան աղբիւրի տեղը, լուսաւոր կին աւազանի վերայ նստած, նոյն լուսաւոր կինը քարայրի խորշի գերեզմանի մէջ մեռած. ճշմարիտ սա կամ երազ է և կամ մի երևոյթ. ինչ պիտի լինի այս ամենի վերջը, Տէր Աստուած։

Այս զարմանքի ու ապշութեան մէջ էին բոլորն էլ. նորա ոչինչ չհասկացան. տարակուսանքի մէջ են. ոչինչ մի որոշ բան չտեսան, իբրև վերջին միջոց համարում են կուսանոցը և մայրապետը. գնում են արագ քայլերով, առանց կանգ առնելու, միայն իրենց տեսածների վերայ զարմանալով և ապշութեամբ միմեանց հարցմունքներ տալով։

---



## ԿՈՒՍԱՆՈՑ ԵՒ ԾԵՐՈՒՆԻ ՄԱՅՐԱՊԵՏ.

Խմբակը շատ որոնելուց յետոյ գտաւ կուսանոցը և ահ ու դողով բարձրացաւ ծերունի մայրապետի սենեակը, որի տախտակամածը ծածկուած էր թանկագին գորգով, սենեակի երեք պատերի առաջ կապած էին միանովի տախտեր, գորգերով ծածկուած և մութաքէք դարսած. պատերի վերայ կախած էին զանազան պատկերներ, իսկ արևելահիւսիսային պատերի անկիւնում փայլում էր փրկչական պատկերը վառ կանթեղը առաջին։ Կանթեղի տակը, տախտի վերայ նստած էր Մայրապետը, որ նուազ կազմուածքով ութսունամեայ ծերունի մի կին էր, սեաւ վերարկուն հագին, սեաւ քողափաթաթով գլուխն ու կերպարանքը կապած և միայն երեսն էր երևում. նորա անուշ բայց սուր նայուածքը արդէն պարզ արտայայտում էր նորա խորագիտութիւնը, շրջանկատ բնաւորութիւնը և բարութիւնը, մի ձեռքով համբիչն էր ձգում և միւս ձեռքով աղօթագիրը բռնած կարդում էր, երբ խմբակը մտաւ սենեակը, գլուխ խոնարհեցրեց նորան, մօտեցաւ և համեստաբար համբուրելով նորա ձեռքը՝ կանգնեց առաջին։

Ո՞վքեր էք դուք աղջիկներս և կամ ինչ է ձեր ցանկացածը, հարցրեց մայրապետը,

Վարդիթերը սկսեց պատմել մի առ մի այն ամենը, ինչ որ տեսել էին իրենք և լսել. մայրապետը համբիչը ձգելով մեծ ուշադրութեամբ լսում էր նորա պատմութիւնը. նա զարմանում էր նոցա դէպի ուսումը ունեցած այդ առատիճան սիրոյ վերայ և սքանչանում էր ինքն իրեն։

Աւարտելով պատմութիւնը, Վարդիթերը դիմեց մայրապետին ասելով. «Այժմ մեր խնդիրն այն է Ձեզ բարի մայրապետ, որ ցոյց տաք մեզ թէ ինչպէս պէտք է գտնենք մենք այդ ուսման բարի մայրը. Ձեր բարի խորհրդի համար մենք երախտապարտ կմնանք Ձեզ և աղօթարար առ Աստուած»։

Ձեր ցանկացածը շուտով կ'կատարուի. ասաց մայրապետը. դուք այս գիշեր կլինէք ձեր տներում, ձեր ծնողների մօտ, վաղը ծէգը բացուելիս՝ ճանապարհ կընկնէք դէպի ձեզ ծանօթ քարայրը. այնտեղ է ահա ձեր որոնած բարի մայրը, որին արդէն դուք տեսել էք, բայց չէք հաւատացել. դուք դարձեալ նորան կտեսնէք. և չլինի թէ հարցնէք թէ դու ով ես, հապա տեսածներիդ պէս, ասացէք. «Ձեզ ենք որոնում, ով բարի մայր». որից յետոյ կլսէք նորանից ամեն ինչ. ուրեմն Աստուած ձեզ օրհնէ, գնացէք բարեաւ։

Խմբակը շնորհակալութիւն արեց ծերունի մայրապետին և համբուրելով նորա ձեռքը, դուրս



եկաւ կուսանոցի տաղանը—քարեայ սրահը, ուր մայրապետի պէս հագնուած ծեր և մանուկ կոյսեր զոյգ զոյգ շարուած էին և սպասում էին մայրապետին. երբ մայրապետը դուրս եկաւ սենեակից, բոլորն էլ խոնարհաբար գլուխները կորացրին նորա առաջ և դանդաղ քայլերով իջան Եկեղեցի, զանգակահարութիւն եղաւ միայն երեք անգամ. Եկեղեցի մտնելուց յետոյ բոլորակ շրջան կազմեցին բէմի առաջ և սկսեցին իրենց աղօթակատարութիւնը, դա Եկեսցէն էր կամ Հանգստեան ժամ, որից յետոյ պիտի քնանային։

Խմբակն էլ իւր աղօթքն արեց, տուեց Աստուծուն իւր հարազատ սրտից բղխած շնորհակալութիւնը և երբ Եկեսցէն աւարտեցաւ, խմբակն էլ մեկնեցաւ այնտեղից, յետոյ բաժանուելով միմեանցից՝ գնաց ամեն մէկը իւր ծնողի գիրկը. իւր տունը։

---

## ԲԱՐԻ ՄԱՅՐ ՄԱՐԻԱՄԸ

Առաւօտը լուսանում էր և խմբակը զարթնում էր իւր քնից. նա շատ արթուն էր քնած և անհամբեր սպասում էր լուսանալուն, որ տեսնէ իւր բարի մօրը. այդ օրն է որ նա պիտի հասնի իւր նպատակին. ահա լուսացաւ և

խմբակն էլ ահա ճանապարհին. նա այժմ ուրախ սրտով է գնում, երգելով է գնում, որովհետև նա արդէն գտած է համարում իւր բարի մայրը. մայրապետի խօսքերը բաւական յուսադրական էին. նորա գնացած ճանապարհը նոյնն է։

Է՜հ, փառք քեզ Աստուած, շուտով գտնելու ենք մեր որոնած բարի մայրը, ասում էր Սաթինիկը։

*Սրբուհի.* Ո՞վ գիտէ, գուցէ այսօր էլ նոր երազ տեսնենք։

*Նարգէս.* Իմ մայրս ինձ ասեց, «որ եթէ այս անգամ էլ չգտնէք, դարձիր տուն և ինչքան էլ որ Աստուած տուել է, մեզ բաւական է, հերիք է դաշտեր ու չոլեր չափչփէք անտէր ու անօգնական». բայց ես պատասխանեցի, չէ մայրիկ ջան, ինչու՞ ի զուր կորչի մեր այսքան աշխատանքը. եթէ ես հեռանամ, ինձ նման էլ մի ուրիշը կհեռանայ. այսպիսով մեր խմբակը կը-ցրուի և ո՞վ պէտք է աշխատէ այդ բարի մայրը որոնել ու գտնել. աւելի լաւ է, ինչպէս սկսել ենք, այնպէս էլ մինչև վերջը գնանք. մեր յոյսը Աստուծոյ վրայ է, նա մեզ կօգնէ, ինչպէս օգնում է մեզ նման և շատ խեղճերին։

*Սիրանուշ.* Նոյնը և իմ մայրն ասեց ինձ։ Մի և նոյնը կրկնեցին և բոլորը, և ուրախ ու զուարթ կերպով առաջ էին գնում, այո՛ ուրախ



են նոքա այժմ, որովհետև բարի մայր գտնելու յոյսը հաստատուն է. կարծես բնութիւնն էլ, որ առաջ չէր զբաղեցնում այդ խմբակին, այժմ ժպտում է նորա երեսին և տալիս է նորան նորա բաղձանքի կատարման մխիթարական աւետիքը. դաշտերն իրենց դալար ու կանաչ արօտներով ողջունում են խմբակի գալուստը. սարերը՝ իրենց ծառազարդ գագաթներով յոյս ու փրկութիւն են աւետում աղջիկ ճանապարհորդներին. ձորերն իրենց խոր անդունդների մէջն են արձագանքում անմեղ խմբակի ուրախ երգը. առաւօտեան զեփիւռից տարուբերուող ճկուն ոստերն ու տերևները գլուխ են խոնարհում աղջիկ խմբակին. երգիչ թռչուններն իրենց անուշ դայլայլիկներով և քաղցր գեղգեղներով ուրախակից են հանդիսանում մանուկ ճանապարհորդներին. առուակն ու աղբիւրը իրենց յստակ ու վճիտ ջրերի մէջն են անդրադարձնում մատաղ խմբակի նազիկ կերպարանքները և իրենց խոխոջը խառնում են խմբակի սիրուն ու ներդաշնակ երգին. պայծառ երկինքը հովանաւորում է անփորձ ճանապարհորդներին. իսկ փրկարար արեգակը յոյս ու փրկութիւն է ճառագայթում խմբակի հոգւոյ և սրտի մէջ. միով բանիւ ամբողջ բնութիւնը կարծես շնորհաւորում է խմբակին նորա բարի մօր գիւտը. նա գտնուած է գրեթէ. մտա-

ծում է խմբակը։ Ահա նորա ծանօթ աղբիւրը, որի մօտ նստեց հանգստանալու առաջին ճանապարհորդութեան ժամանակ. ահա և ձորափը՝ ուր Ձողեր և Համասփիւռ հովուհիների հետ ծանօթացաւ և նոցա հետ նախաճաշեց. նա գնում է, բայց մի քանի քայլ ևս, և ահա անծանօթ է նորան այժմեան ճանապարհը. կաղնին՝ որի հարուստ տերևազարդ ճիւղերի շուքի տակ նըստած հանգստանում էր և լսում Վարդանուշից ապերախտ Դարինկայի և տիրասէր Հոռոմսիմի պատմութիւնը, չէ երևում այլ ևս, և հետքն անգամ չկայ. չէ երևում և քարայրը։ Տատանում է խմբակը. դարձեալ յուսահատութիւնը տիրում է նորան. վերջապէս խորհուրդ են անում և իրարից բաժանւում են. և երկու երկու միանալով, որը աջ, որը ձախ, առաջ և յետ գնալով, որոնում են որ քարայրը գտնեն, որովհետև այնտեղ է նոցա բարի մայրը, ինչպէս մայրապետն ասաց. նոքա բաժանուեցան միմեանցից և այլ ևս չեն երևում. ինչ եղան այն խեղճ աղջիկները. չլինի թէ իրար կորցրին. եթէ յիրաւի իրար կորցրած լինին, ով պէտք է նոցա գտնէ, դարձեալ միացնէ. կամ ինչ լաց ու արտասուք նոցա ծնողներին այնուհետև, եթէ նոքա իմանան որ իրանց որդիքը կորել են չոլումը, տանից դուրս, գրկից հեռու....



Բայց չէ, չէ. նոքա չեն կորչի. նոցա Աստուածը մեծ է, բարի է. նորա հրեշտակն է նոցա պահապանն ու առաջնորդը. և ինչպէս կարող են նոքա կորչել. իրենց ծնողական գրկից հեռու, քանի որ իրենց յոյսը դրել են Ամենաբարի Արարչի վերայ, միթէ կթողնէ Աստուած որ իւր վերայ յուսացողները կորչեն. ոչ, ոչ. այդ անկարելի է։

Հապա ուր են. ինչու չերևեցան մինչև այժմ։ Ահա նոքա, ահա. տեսէք այն հեռուն, ուր աչքը հազիւ է կտրում, կապուտ ընդարձակ ովկիանոսի ափին խմբուած են. ովկիանու յուզուած ալիքների վերայ տատանւում է մի փոքրիկ տախտակ, դա խմբակին ծանօթ է. ովկիանու միւս ափին մի չքեղ մատուռի մէջ, գերեզմանաքարի վերայ նստած է մի կին, դիցուհու նման, բարի կերպարանքով. նա խմբակին է նայում և խմբակը նորան։

Այս քո տեսած երազի նման է Սիրանուշ, ասաց Վարդանուշը։

Բայց ուր են քարաժայռերը և տգիտութեան բանակը, հարցնում էր Նուարդը։

Լաւ է, որ նորանք չկան, ապա թէ ոչ շատ կվախենայինք, պատասխանում է Նարգէսը։

Սիրելի՛ քոյրեր, երկար նայելուց յետոյ Վարդիթերն է ասում, ովկիանու միւս ափին մատու-

ռի մէջ, գերեզմանաքարի վերայ նստող կինը, ինչ նման է այն աւազանի երեսին լողացող այս տախտակի վերայ նստող կնոջը, յիշում էր։

Այո, այո. վրայ բերեց Նազիկը. հապա մատուռը ինչպէս նման է քարայրին։

Դարձեալ երազումն ենք մենք, ասում էր Արուսեակը։

Ճշմարիտ, այս մեր գլխի անցքը գրելու բան է. աւելացրեց Նազելին։

Այսպէս զարմացած խօսում էին, երբ ովկիանու միւս ափին նստող կինը ձայն տուեց այնտեղից. «Ո՞վ էք դուք, անմեղ աղջիկներ, ինչ էք խնդրում և կամ ումն էք որոնում»։

Վարդիթերը դառնալով դէպի խմբակը՝ ասաց. յիշում էք աւազանի վերայ մեր տեսած կնոջ ձայնն ու խօսքերը՝ բոլորովին նոյնն են, ինչ որ լսում ենք այժմ սորանից. ուրախացէք քոյրիկներ, բարի մայրը գտնուած է, մենք հասած ենք մեր նպատակին. փառք տանք Աստուծուն և ինչպէս մայրապետը մեզ զգուշացրեց, էլ չհարցնենք թէ դու ո՞վ ես, հապա միաբերան կանչենք այստեղից թէ քեզ ենք որոնում, քեզ ո՞վ ուսման բարի մայր. այսպէս էլ արեց խմբակը, որին պատասխանում է կինը «Ինչ է ձեր խնդրածը, ինչ է ձեր ճանապարհորդութեան նպատակը». «Մենք կպատմենք քեզ բո-



լորը, ո՞վ բարի մայր, եթէ իրաւունք կտաս և կօգնես մեզ քեզ մօտ գալու». պատասխանեց խմբակը։

«Ինձ մօտ գալ չէք կարող, անմեղ աղջիկներ, տեսնում էք այս ընդարձակ ովկիանը և սորա ալեկոծուած ջրերը. ոչ մի հնար չկայ այժմ ձեզ ինձ մօտ գալու». պատասխանեց կինը։

Եթէ այդպէս է, ասաց Վարդիթերը, ուրեմն իրաւունք տուր ինձ, ո՞վ բարի մայր, որ ես իմ քոյրերի կողմից պատմեմ քեզ այն ամենը, ինչ որ անցել է մեր գլխով քեզ որոնելիս։

Կինը համաձայնեցաւ և Վարդիթերը միառ մի սկսաւ պատմել բոլորը։

Համբերութեամբ լսելուց յետոյ, կինը լաց եղաւ. տեսնելով թէ ինչքան կարօտութիւն կայ ուսման, ինչքան խեղճութիւն Հայ ընտանիքների մէջ, որի պատճառը տգիտութիւնն է միայն. և նորա արտասուալից հառաչքը արձագանք էր գտնում խմբակի սրտի մէջ, խմբակն էլ այստեղ սկսեց լալ. և երկու կողմի լացողների արտասուքը խառնւում էին ովկիանու յուզուած ու կատաղած ալիքներին։

Խղճաց այո, շատ խղճաց բարի կինը այս խմբակի վերայ ուզեց սորան մխիթարել, ուստի և յայտնեց սորան իւր ով լինելը. նա խօսեց այսպէս՝ «Ես վաղուց ծանօթ էի ձեր քա-

ղաքի Հայ ընտանիքների խղճալի դրութեան հետ. նոցա վիճակը ինձ յայտնի էր սորանից մի քանի տարի առաջ. ուստի և ես իմ բարի ամուսնու հետ խորհուրդ արի որ որքան կարելի է օգնել ձեզ նման Հայ աղջիկներին, ձեր խնդիրը ես կատարում եմ. և դուք կգտնէք այն ձեզ ծանօթ կուսանոցի քարափի տակ. այդ ափին ջրի վերայ լողացող տախտակը կհանէք ջրից և հետներդ կտանէք, այդ տախտակի վերայ երկար նայելուց յետոյ դուք կտեսնէք այն, ինչ որ սրբոտով ցանկանում էք. գնացէք բարեաւ. Աստուած ձեզ հետ»։

Շնորհակալ ենք քեզանից, բարի մայր, ասաց խմբակը. բայց որպէս զի միշտ աղօթք անենք քեզ և քո բարի ամուսնու համար, աղաչում ենք որ յայտնես մեզ քո և նրա պաշտելի անունները։

Իմ անունս է Մարիամ և այս շիրիմն է իմ ընակարանը, ասաց կինը, իմ ամուսնուս անունն է Յովնան, նա կենդանի է, աղօթք արէք որ իմ ամուսինս ապրի երկար և յաջող և ձեզ իրև հայր սիրէ և խնամէ. աղօթք արէք և ինձ համար, որ հոգիս խաղաղ լինի երկնքում և ոսկերքս հանգիստ՝ այս շիրմի մէջ. Աստուած ձեզ հետ, բարի աղջիկներ, դուք կլինէք Մարիա-



մեան—Յովնանեան սաներ». ասաց և այլ ևս չերևեցաւ։

Հազիւ կարողացաւ խմբակը տախտակը հանել ջրից և ահա ովկիանն անհետացաւ և ինքն իրան այն աղբիւրի մօտ գտաւ. որ աւազան էր առաջին անգամ. ահա և քարայրը, ուր ինչ տենչանօք մտնում է խմբակը. դիմում է դէպի խորշը, բացում է շքեղ գերեզմանի մարմարեայ ծածկոցը և ահա ովկիանու ափին իւր աւետաւոր Բարի Մայր Մարիամը ընկողմանած է գերեզմանի մէջ և ննջած ի Քրիստոս. դարձեալ ծածկում է կափարիչը, շոքում է գերեզմանի շուրջը, իւր արտասուքով թրջում է մարմարեայ ծածկոցը և իւր ջերմ աղօթքով խաղաղութիւն է մաղթում Աստուածանից իւր Բարի Մայր Մարիամի հոգուն երկնքում և հանգիստ՝ նորա ոսկերաց այս շիրմի մէջ. իսկ հայր Յովնանու համար երկար և յաջող կեանք է հայցում այս աշխարհում. յետոյ արտասուքը աչքերին դուրս է գալի խորշից, մտնում է քարայրը, համբուրում է քարայրի պատերը. այո՛ քարայրն էր իւր պատսպարանը և այնտեղից ծագեց իրեն փրկութիւն և բաղձանքի կատարումը. դուրս է գնում ոտքերը քարայրից, իջնում է աղբիւրը, վերջին բարևը տալիս է և իւր սիրուն աղբիւրակին և շտապում է քաղաք բոլորովին ուրախ սրտով և բաւական

հոգւով. որովհետև արդէն հասած է իւր նպատակին։

---

## ՄԱՐԻԱՄԵԱՆ—ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

---

*Նազելի։* Ահա կաղնին, մեր սիրելի կաղնին, չնստէնք փոքր ինչ նորա շուաքում, քոյրիկներ։

*Նուարդ.* Նստենք. սիրելիք, հանգստանանք. ինչու այսպէս յոգնած եմ զգում ինձ։

*Նարգէս.* Քիչ բաներ տեսանք, քիչ ահ ու սարսափ կրեցինք, կամ քիչ ճանապարհ գնացինք ու եկանք։

*Վարդանուշ.* Բայց փառք Աստուծոյ. հասանք վերջապէս մեր նպատակին. ինչքան կուրախանան այժմ մեր ծնողները, որ գտանք Բարի Մայր Մարիամը։

*Վարդիթեր.* Այո, ես փորձել եմ. քանի՜, քանի անգամ երբ մի սուրբ և օգտակար բանի համար աղօթք եմ արել Աստուծուն և խնդրել եմ որ Աստուած կատարէ, կատարուած եմ տեսել, երբ ճանապարհին դուք յուսահատւում էիք, թէ երազի մէջ ենք, ոչինչ չի լինի, այնու ամենայնիւ ես յոյս ունէի թէ Աստուած մեզ կխղճայ և մեր նպատակին կհասցնէ. ահա այժմ կատարուած ենք տեսնում մեր խնդրուածքը։



*Արուսեակ.* Դեռ փոքր ինչ էլ առաջ գնանք, տեսնենք էլի ինչ կպատահի. ես կարծում եմ դեռ բոլորը չէ վերջացած։

*Սաթինիկ.* Ի հարկէ կարող է պատահել. բայց...

Վարդիթերը ընդհատելով Սաթինիկի խօսքը՝ առաջարկեց քոյրերին մօտենալ իրեն և նայել Բարի Մայր Մարիամի տուած տախտակի վերայ. շատ նայեցին, բայց ոչինչ չտեսան. տախտակը կրկնածալ էր, բայց ծալը չէր երևում. երկար նայելուց յետոյ վերջապէս նկատեցին տախտակի վերայ նկարուած մի հոյակապ շէնք, որ հազիւ էր նշմարւում. դարձեալ երկար նայելուց յետոյ վերջապէս կարողացան ծալն էլ նկատել. բաց արին և մէջը դարսած էր մի փոքր կտոր թուղթ, մի փոքրիկ գրիչ և թանաքման թանաքով. աջ կողմում մի բարի մսրդու պատկեր, իսկ ձախ կողմումը՝ Բարի Մայր Մարիամի պատկերը՝ որը համբուրեցին և իբրև սրբութիւն պահեցին և ուխտեցին չկորցնել, չկեղտոտել և չկոտրել։

Այս տախտակի վերայի նկարը, ասաց Վարդիթերը, կարծում եմ որ պիտի լինի ուսումնարանը, որի մէջ պէտք է ուսանենք. թուղթ, գրիչ և թանաքը, արդէն պարզ է, որ ուսման

անհրաժեշտ պիտոյքներն են, իսկ Բարի Մայր Մարիամի հանդէպ եղած պատկերը անպատճառ նորա ամուսնու՝ Բարի Հայր Յովնանու պատկերը պիտի լինի, որի կենաց համար պատուիրեց մեզ աղօթք անել մեր բարի մայրը։

*Նազիկ.* Ի՞նչ բարի կերպարանքներ ունեն, նորա համար էլ բարի սիրտ ունեն, որ մտածել են մեզպէս անուսում աղջկերանց համար։

Բաւական հանգստանալուց յետոյ, վեր կացաւ խմբակը մնաս բարեաւն ասեց հարիւրամեայ կաղնուն և ճանապարհ ընկաւ. աննկարագրելի է նորա ուրախութիւնը և անբացատրելի է նորա զարմանքը այս ամեն պատահածների վերայ. ինչ և իցէ երկար ճանապարհորդութիւնից յետոյ հասնում է քաղաք և դիմում է ուղղակի կուսանոցի կողմը. ուր շուտով աչքին է ընկնում մի հոյակապ եռայարկ շէնք, մեծ և ընդարձակ բակով, դա է Մարիամեան—Յովնանեան օրիորդաց ուսումնարանը, ուր մտնում է խմբակը Մարիամեան—Յովնանեան սան անուամբ, քայլ է դնում ուսման առաջին աստիճանի վերայ, հասած համարելով իրեն իւր նպատակին։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՎՐԻՊԱԿ

| Էջ | Վերից. | Ներքից. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|---|
| 19 | „ | 4 | դժողքը | դժոխքը |
| 23 | „ | 1 | իրան | իրեն |
| 25 | „ | 11 | դբրկենք | գրկենք |
| 40 | 7 | „ | հիւրնկալ | հիւրընկալ |
| 41 | „ | 2 | խելճ | խեղճ |
| 43 | 6 | „ | փրկուելու» | փրկուելու |
| 45 | 10 | „ | ծերունին» այժմ | ծերունին. «այժմ |
| 53 | 7 | „ | բայն | բայց |
| 55 | 12 | „ | ցանկացանք | ցանկացածը |
| 58 | 9 | „ | անպաչտան | անպաշտպան |
| 61 | 5-6 | „ | մեզ նման մարդկանց | մեզ Զեզ նման մարդկանց |
| „ | „ | 5 | երեկոլեաններեր | երեկոներեր |
| 62 | „ | 5 | մոտծում | մոտածում |
| „ | „ | 3 | Մ... | Մ..... |
| 63 | 9 | 15 | Տ... | Տ.. |
| 65 | „ | 11 | Ա.լ... ռեան | Ա.լ ..ռեան |
| 66 | 7 | „ | Ա.լ. . — | Ա.լ. . . — |
| 72 | „ | 2 | չրջաղալում է | չրջագալում է |
| „ | „ | „ | մամարեալ | մարմարեալ |
| „ | 14 | „ | հառանում | հեռանում |

ՍՈՎԵՏԱԿԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Armenian Library
7/31 1922
Ինվեր. Համարներ
Ա. ՍՅԱՍՆԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Ճանապարհածախսով 30 կ.

Վաճառում է բոլոր գրավաճառների մոտ. և հեղինակի մոտ այս հասցէով՝ Тифлисъ, Марійнско-Анановское женское училище.

Գումարով գնողներին 15—20% զիջումն.

ՀՀ Ազգային գրադարան
NL0321786

22875

891.99
Г-15